ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՁԵՌՆԱՐԿ

Երևան 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան:

Գլուխ I: ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ:

Մաս 1. Գենդերային ուղղորդման հիմնական դրույթները:

Մաս 2. Գենդերային բյուջետավորում:

Մաս 3. Գենդերային մոնիթորինգ:

Գլուխ II: Գենդերային հիմքով բռնություն:

Մաս 1. Բռնության տեսակներ:

Մաս 2. Բռնության հետևանքները:

Մաս 3. Սեռական բռնություն երեխայի նկատմամբ: Ինցեստ:

Մաս 4: Ընտանեկան բռնություն:

Մաս 5. Հասարակության մեջ առկա միֆեր՝ կեղծ մտքեր, բռնության տարբեր տեսակների վերաբերյալ:

Գլուխ III: Խորհրդատվություն:

Մաս 1. Խորհրդատվության հիմնական տեսակները:

Մաս 2. Խորհրդատվության կառուցվածքը:

Մաս 3. Խորհրդատվության առանձնահատկությունները բռնության ենթարկված անձանց հետ:

Մաս 4. Խմբային խորհրդատվություն:

Մաս 5. Խորհրդատվության հիմնական տեխնիկաները:

Մաս 6. Խորհրդատվության էթիկական սկզբունքները:

Մաս 7. Սուպերվիզիա:

Գլուխ IV: ՀՀ Օրենսդրություն:

Գլուխ V: ՀՀ Պետական քաղաքականություն:

Գլուխ VI: Ուղղորդում:

Նախաբան

“Գենդերային բռնության զոհերի ուղղորդում” ինֆորմացիոն ձեռնարկը ստեղծվել է “Կանանց ռեսուրսային կենտրոն” ՀԿ-ի կողմից 2013 թվականին “UN trust fund to end violence against women”-ի աջակցությամբ “Strengthening a Multi Sectoral Response to Counter Gender Based Violence in Rural Areas of Armenia”/2012 - 2014/ ծրագրի շրջանակներում:

Ձեռնարկը նախատեսված է գենդերային բռնության զոհերին աջակցություն տրամադրող պետական և ոչ պետական կառույցների աշխատակիցների համար: Այն բաղկացած է 6 գլուխներից՝ **Գենդերային ուղղորդում, Գենդերային հիմքով բռնություն, Խորհրդատվություն, ՀՀ Օրենսդրություն, ՀՀ Պետական քաղաքականություն, Ուղղորդում:**

ԿՌԿՀ-ն նախաձեռնել է ստեղծել այս ձեռնարկը՝ որպես աշխատանքային ուղեցույց գենդերային բռնության զոհերի հետ աշխատող բոլոր անձանց համար: Այն իր մեջ պարունակում է գենդերային հիմքով բռնության, բռնության բոլոր տեսակների, դրանց առանձնահատկությունների, ինչպես նաև հետևանքների վերաբերյալ մանրամասն ինֆորմացիա: Ցանկացած մասնագետ կարող է կարդալ այն և հստակ պատկերացում կազմել բռնության զոհի, նրա հետ կատարված բռնության, նրա ապրումների և կարիքների, ինչպես նաև բռնության բոլոր հետևանքների վերաբերյալ: Ձեռնարկում կա ինֆորմացիա նաև այն մասին, թե ինչպես պետք է և կարելի է աշխատել բռնության ենթարկված անձի հետ, ինչպես խոսել՝ նրան ավելի շատ չվիրավորելու համար, ինչպես օգնել ստեղծված իրավիճակից ելքեր գտնել:

Ձեռնարկում կա մեկ ամբողջական բաժին նվիրված ՀՀ օրենսդրությանը, ինչը կօգնի նախքան հատուկ մասնագետներին ուղղորդելը, որոշակի տարրական խորհրդատվություն տրամադրել զոհին իր իրավունքների վերաբերյալ:

Ձեռնարկի ստեղծման համար հատուկ շնորհակալություն ենք հայտնում՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Կանանց բաժնի պետ՝ Ա.Թանաշյանին և բաժնի առաջատար մասնագետ Է.Վիրապյանին:

INTRODUCTION

The Information Manual on “Referral Mechanism for the Victims of Gender Based Violence” has been created by Women Recourse Center NGO in 2013 with the support of “UN Trust Fund to End Violence Against Women” in the framework of two year project “Strengthening a Multi Sectoral Response to Counter Gender Based Violence in Rural Areas of Armenia” (2012 – 2014).

The manual is for the employees of governmental and non-governmental organizations providing support to the victims of gender violence. It consists of 6 chapters: **Gender Mainstreaming, Gender-based Violence, Conseling, RA Legislation, RA State Politics, and Guidance.** Women’s Resource Center undertook to create the manual as a working guidance for the stakeholders working with the victims of gender based violence and it consist of detailed information about the gender-based violence, all the types of violence, their features and consequences. Each specialist can read it and have a clear understanding about the survivor of violence, how it affects the survivor, his/her feelings and needs, as well as about all the consequences of the violence on the micro and macro levels. There is also the information in the manual how the specialists should work with the victims of violence, how to speak with the victims of violence, how to help them to find the ways out of that situation. There is one full chapter in the manual about RA Legislation, which will help with providing some basic consultancy to the victim about his/her rights before refer to the certain specialist.

For the creation of the manual WRC would like to express special thanks to the Head of Women Department of the Ministry of Labor and Social Affairs Ms. Armenuhi Tanashyan and Department Leading Specialist Ms. Elina Virapyan.

Գլուխ I: ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ

Մաս 1. Գենդերային ուղղորդման հիմնական դրույթները:

1.1 Գենդերային հարցի պատմությունը և հիմնական հասկացությունները:

1980-ական թվականներից սկսած հասարակական գիտություններում ակտիվորեն զարգացավ այն պատկերացումը, որ կանանց և տղամարդկանց սոցիալական դերերը, սեռերի միջև փոխհարաբերությունները ձևավորվում են սոցիալականացման գործընթացում և լիովին պայմանավորված են հասարակության կառուցվածքով և մշակույթով, այլ ոչ թե կենսաբանությամբ: Կարիք եղավ հասկանալու «Գենդեր» և «Սեռ» հասկացությունների տարբերությունները՝

Սեռ	Գենդեր
Կանանց և տղամարդկանց միջև եղած կենսաբանական տարբերություն՝ կապված ֆիզիոլոգիայի և վերարտադրողական ունակությունների հետ	Ներառում է տնտեսական, սոցիալական, քաղաքական, մշակութային հատկանիշներ և հնարավորություններ, որոնք կապված են արական կամ իգական սեռերին պատկանելու հետ
Կենսաբանական է	Սոցիալապես կառուցված է
Համընդհանուր է	Ձեռք բերված է
Անփոփոխ է կյանքի ընթացքում	Յուրահատուկ է մշակույթի տեսակետից
Տարբերությունները երևում են ծննդյան պահից	Փոփոխվում է ժամանակի ընթացքում

Տղամարդկանց և կանանց սոցիալական սեռը անվանվեց «գենդեր»՝ ի տարբերություն կենսաբանական սեռին: Գենդերի դիտարկումը սոցիալ-մշակութային մոտեցման տեսանկյունից ենթադրում է, որ յուրաքանչյուր հասարակություն ունի իր ձևավորված պատկերացումները կանանց և տղամարդկանց վարքային մոդելների

վերաբերյալ, որոնք կարգավորում են սեռերի միջև փոխհարաբերությունները տվյալ հասարակությունում:

Գենդերային նորմերը (ինչը կարելի է տղամարդուն, ինչը՝ կնոջը) և նրանց հետ կապված սանկցիաների համակարգը, մի կողմից ամրագրվում է տվյալ երկրի սահմանադրությամբ և օրենսդրությամբ, մյուս կողմից, արտահայտվում է առօրյա հաղորդակցումների ընթացքում և կրում է ոչ ֆորմալ բնույթ: Հաճախ օրնեսդրությամբ սահմանված գենդերային նորմերը չեն իրագործվում առօրյայում և հեշտությամբ փոխարինվում են ոչ ֆորմալ նորմերով և օրենքներով: Այս գործընթացի բացասական կողմը կայանում է նրանում, որ գենդերային դերերի մասին պատկերացումները հաճախ լինում են կարծրատիպային և հանդիսանում են գենդերային հիմքով խտրականության հիմք: Ավելին, այդ կարծրատիպերը միտում ունեն վերարտադրվելու սերնդեսերունդ և հաճախ նույնիսկ լիովին չեն գիտակցվում մարդկանց կողմից: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հայեցակարգի տեսանկյունից գենդերային խտրականությունը սահմանափակում է թե կանանց, թե տղամարդկանց ինքնահիրացման և ինքնադրսևորման հնարավորությունները՝ ձևավորելով վարքային մոդելների խիստ և կարծր շրջանակներ:

Գենդերային հավասարության ապահովման կարևորագույն նպատակներից է վերացնել գենդերային հիմքով առաջացած խտրականությունը և նպաստել կանանց և տղամարդկանց համար հավասար պայմանների ստեղծմանը՝ հասարակության քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում հավասար դերակատարում ունենալու համար:

Գենդերային սոցիալականացում, գենդերային դերեր: Մարդը մշակութային օրինակները յուրացնում է ամբողջ կյանքում, սոցիալականացման ընթացքում:
Սոցիալականցումն այն բոլոր սոցիալական գործընթացների ամբողջությունն է, որոնց շնորհիվ անձը յուրացնելով որոշակի նորմերի և արժեքների համակարգ, դառնում է հասարակության լիիրավ անդամ: Սոցիալականցումը ձևավորման գործընթաց է, որը սկիզբ է առնում անձի ծննդյան պահից:
Գենդերային սոցիալականացումը հասարակության գենդերային մշակույթի

յուրացումն է անձի կողմից և սեռերի տարբերությունների սոցիալական կառուցավորումը: Գենդերային սոցիալականացման ընթացքում անձը յուրացնում է տղամարդկային և կանացի վարքի մոդելները, հարաբերությունները, նորմերը, արժեքները և գենդերային կարծրատիպերը:

Առանձնացվում է գենդերային սոցիալականացման երկու փուլ.

- առաջնային սոցիալականացման փուլ կամ **հարմարեցում (ադապտացիա)**, երբ անհատը հարմարվում է գոյություն ունեցող նորմերին ու դերերին: Այն սկսվում է դեռ մանկությունից, երբ երեխան վարվելակերպի կանոնները յուրացնում է ոչ գիտակցաբար, նույնիսկ հարկադրված: Գիտնականներն այդ փուլը որակում են որպես գենդերային մոդելների կուտակման գործընթաց: Դա շատ կարևոր փուլ է, քանի որ մանկության շրջանում յուրացրածը խորն է արմատավորվում, դանդաղ է փոփոխվում և կյանքի հետագա փուլերի հիմք է դառնում:
- երկրորդային սոցիալականցման փուլ կամ **ինտերիորիզացիա՝** վերասոցիալականացում, երբ հասնելով որոշակի տարիքի՝ անհատը գործում է գիտակցաբար և քննադատաբար է մոտենում իրեն հրամցված գենդերային կարծրատիպերին: Տեղի է ունենում նախկինում յուրացված նորմերի գնահատում, դրանց մի մասը, տվյալ մարդուն անհարիր լինելով, մերժվում է:

Սոցիալականացումը տեղի է ունենում սոցիալականացման ինստիտուտների միջոցով (ընտանիք, նախադպրոցական հիմնարկներ, ուսումնական հաստատություններ, շրջապատ, աշխատանքային կոլեկտիվ, կրոնական կազմակերպություններ, ԶԼՄներ և այլն):

Սոցիալականացման բոլոր փուլերում հասարակության ներգործությունն անձի վրա տեղի է ունենում կամ անմիջականորեն, կամ հատուկ խմբերի՝ սոցիալականացման գործակալների միջոցով (ծնողներ կամ ընտանիքի մյուս անդամներ, հարևաններ, ընկերներ, հասակակիցներ, ուսուցիչներ, դասախոսներ, հոգևորականներ, լրագրողներ և այլն):

Գենդերային սոցիալականացման գործակալների ու մեխանիզմների միջոցով արմատավորվում են գենդերային դերերը, որոնք նպատակ ունեն կոդավորելու տղամարդկային և կանացի վարքագծի ստանդարտացված մոդելները:

Գենդերային դերերը հասարակության կողմից կենսաբանական սեռին թելադրվող

վարքի որոշակի մոդելներ են: Կատարել այս կամ այն գենդերային դերը, նշանակում է ունենալ տղամարդուն կամ կնոջը համապատասխան արտաքին տեսք, հագնվելու ոճ, շարժուձև, խոսք, ստանձնել հասարակության մեջ այդ գենդերին հատկացված գործառույթ, ունենալ որոշակի սոցիալական կարգավիճակ և այլն:

Գենդերային խտրականություն:

Գենդերային խտրականությունը մի գործելակերպ է, երբ մեկ սեռին տրվում է

նախապատվություն մյուս սեռի համեմատությամբ:

Գենդերային խտրականություն ասելով՝ հասկանում ենք. «Սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը» (Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿի կոնվենցիա, 1ին հոդված):

ՀՀ Սահմանադրությունը արգելում է սեռի սկզբունքով խտրականությունը: Սակայն դե յուրե ամրագրված սահմանադրական իրավունքները չեն բացառում դե ֆակտո խտրական գործելակերպը:

Իրական կյանքում խտրական գործելակերպերի հիմքում ընկած են.

- գենդերային կարծրատիպերը, հասարակությունում և ընտանիքում դրանց հիման վրա գենդերային դերերի ավանդական բաշխումը, որը պահպանվում, ամրապնդվում և վերարտադրվում է հայրիշխանական հասարակական բոլոր ինստիտուտների կողմից,
- տղամարդկանց և կանանց անհավասար դրությունը տնտեսական ոլորտում,
- որոշումների ընդունման մակարդակի քաղաքական պաշտոնների և պետական իշխանության մարմինների ոչ հավասար մատչելիությունը տղամարդկանց և կանանց համար:

Գոյություն ունեցող խտրականությունը հաճախ չի ընկալվում որպես այդպիսին

հասարակությունում կնոջ դերի մասին արմատավորված կարծրատիպային պատկերացումների պատճառով: Խտրականությունը չգիտակցելու հիմնախնդիրը նաև հասարակության ցածր իրավական մշակույթի հետևանք է:

Այսպիսով, խտրականություն հասկացությունը վերաբերում է ոչ միայն կանանց և տղամարդկանց իրավական հավասարությանը, այլև նրանց փաստացի դրությանը:

Գենդերային խտրականությունը կարող է դրսևորվել կյանքի տարբեր բնագավառներում, ինչպես օրինակ՝ ընտանիքում (ընտանեկան պարտականությունների անհավասար բաշխման, հղիության ստիպողական ընդհատման, արգելքների և այլնի միջոցով), աշխատաշուկայում (միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց տարբեր վարձատրությամբ, աշխատավարձի փոփոխությամբ՝ բարձրացմամբ կամ իջեցմամբ, կամ աշխատանքի պայմանների վատթարացմամբ) և այլուր:

1.2. Գենդերային ուղղորդման հիմնական տարրերը:

Կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ապահովումը հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում հանդիսանում է տվյալ հասարակության զարգացվածության չափանիշներից մեկը: Այսօր այն պետություններից շատերը, որոնք գնում են ժողովրդավարացման ուղիով, հանդիսանում են գենդերային մոտեցման ներդրման (կամ գենդերային ուղղորդման) և պետական գենդերային քաղաքականության կողմնակիցները:

Այսօր գենդերային մոտեցման ներդրումը կարելի է համարել սոցիալական արդարության և մարդկային կայուն զարգացման ապահովման կարևորագույն մեխանիզմներից մեկը: Գենդերային ուղղորդումը իր ազդեցությունն է ունենում աղքատության կրճատման, տնտեսական զարգացման, քաղաքացիական հասարակության կառուցման գործընթացների վրա:

ՄԱԿ-ը սահմանում է գենդերային մոտեցումը/ուղղորդումը որպես՝

«...բոլոր բնագավառներում և մակարդակներում յուրաքանչյուր ռազմավարության, իրականացվող ծրագրի, միջոցառման գնահատումը կանանց և տղամարդկանց վրա ունեցած հնարավոր ազդեցությունների տեսակետից: Այս մոտեցումը հիմնված է այն

գաղափարի վրա, որ կանանց և տղամարդկանց հետաքրքրությունները և փորձը պետք է դառնան քաղաքական, տնտեսական և հասարակական բնագավառներում յուրաքանչյուր գործունեության մշակման, իրականացման և գնահատման անբաժանելի չափանիշը»:

Գենդերային ուղղորդում ----------> Գենդերային հավասարություն

(գործընթաց) (արդյունք)

1.3. Գենդերային ուղղորդման հիմնական սկզբունքները[1].

- Բոլոր նախագծվող և իրականացվող ծրագրերը պետք է մշակված լինեն այնպես, որ գենդերային տարբերությունները ենթարկվեն գնահատման, այինքն չլինեն գենդերային տեսանկյունից չեզոք:
- Գենդերային ուղղորդման ներդրումը և կիրառումը գործնականում պետք է լինի որոշումների կայացման մակարդակում գտնվող ամենաբարձր պաշտոնյաների պատասխանատվության տակ: Գենդերային մոտեցման ներդրմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները պետք է պարբերաբար ենթարկվեն մոնիթորինգի:
- Գենդերային ուղղորդումը պահանջում է, որ կանայք հնարավորինս ներգրավվեն և մասնակցեն որոշումների կայացման գործընթացներում:
- Գենդերային ուղղորդումը պետք է ինստիտուցիոնալացվի կոնկրետ քայլերի, մեխանիզմների և գործընթացների միջոցով:
- Գենդերային ուղղորդման հայեցակարգի արդյունավետ ներմուծումը կարող է իրագործվել միայն ուժեղ քաղաքական կամքի, ինչպես նաև համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների շնորհիվ, ինչի համար պետք է օգտագործվեն ֆինանսավորման բոլոր հնարավոր աղբյուրները:

1.4. Գենդերային մոտեցում:

[1] Gender and Development Programme, United Nations Development Programme (GIDP/UNDP): UNDP Learning and Information Pack- Gender Mainstreaming, 2000, p.34 , website:http://learning.undp.org

Գենդերային մոտեցումը նպաստում է այն բանին, որ «գենդերային գործոնը» դառնում է նշանակալի բոլոր կարևորագույն ռազմավարական ուղղություններում և ոլորտներում: Գենդերային մոտեցումը առանձնանում է նաև նրանով, որ այն ուղղված է ոչ միայն կանանց և նրանց խնդիրներին, այլ դիտարկում է երկու սեռերին որպես գործընթացի հավասար մասնակիցներ: Այդ տեսակետից գենդերային մոտեցումը լիովին տարբերվում է «կանայք զարգացման մեջ մոտեցումից»:

«Կանայք զարգացման մեջ» և «գենդերը և զարգացումը» մոտեցումները հաճախ նույնացվում են, սակայն նրանք ունեն հիմնարար տարբերություններ: «Կանայք զարգացման մեջ» մոտեցումը զարգացել է 1970թ. և ուղղված է եղել այնպիսի քաղաքականության և գործողությունների զարգացմանը, որը կապահովեր կանանց զարգացումը և նրանց մասնակցությունը հասարակության կենսագործունեության բոլոր բնագավառներում: Երկրորդ մոտեցումը՝ «գենդերը և զարգացումը», տարածում ստացավ 1980թ. և նպատակ ուներ հաստատել երկու սեռերի տնտեսական, քաղաքական և սոցիալական հավասարությունը: Ներկայումս երկու մոտեցումներն էլ կիրառվում են տարբեր երկրների գենդերային քաղաքականության մշակման ընթացքում, սակայն նախապատվությունը տրվում է երկրորդին:

Աղյուսակ. «Կանայք զարգացման մեջ» և «գենդերը և զարգացումը» մոտեցումների համեմատական վերլուծություն [2]

	Կանայք զարգացման մեջ	**Գենդերը և զարգացումը**
Մոտեցում	Ենթադրվում է, որ կանայք հավասար չեն տղամարդկանց հետ	Կենտրոնացած է մարդկանց վրա՝ անկախ նրանց սեռից
Ֆոկուս	Կանայք	Կանանց և տղամարդկանց միջև փոխհարաբերությունները
Հիմնախնդիր	Կանայք մեկուսացված են զարգացման գործընթացից	Անհավասարությունը կանանց և տղամարդկանց միջև

[2] Introductory Gender Analysis and Gender Planning Training Module for UNDP Staff, 2001.

		խոչընդոտում է հասարակության զարգացմանը
Նպատակ	Արդյունավետ զարգացում կանանց մասնակցությամբ	Կայուն զարգացում կանանց և տղամարդկանց՝ որոշումների կայացման մակարդակում հավասար մասնակցությամբ
Լուծում	Ներգրավել կանանց գործող համակարգի մեջ	Կանանց հնարավորությունների ընդլայնում
Ռազմավարություն	Միայն կանանց համար ծրագրերի և միջոցառումների իրականացում	Այնպիսի ծրագրերի և միջոցառումների իրականցում, որոնց հիմքում ընկած է տղամարդկանց և կանանց խնդիրների լուծումը և կյանքի որակի բարելավումը

Գենդերային մոտեցման ներդրումը ենթադրում է գենդերային հիմնախնդիրների բազմակողմանի վերլուծություն և միջոցառումների համակարգի մշակում հետևյալ բնագավառներում [3]՝

Մակրոտնտեսություն

Քանի որ մակրոտնտեսությունը սահմանում է պետական քաղաքականության առաջնայնությունները և հիմնական ուղղությունները, ուստի գենդերային մոտեցման և սոցիալական արդարության ներդրումը այս մակարադակում կարող է մեծ դեր խաղալ գենդերային հավասարության ապահովման գործում: Ավելին, գենդերային հիմնախնդիրների անտեսումը մակրոմակարդակի վրա անխուսափելիորեն ազդում է միկրոմակարդակի վրա տեղի ունեցող գործընթացների վրա: Մակրոտնտեսությունում գենդերային մոտեցման ներդրումը սերտորեն կապված է

[3] Практическое руководство по внедрению гендерных подходов Региональное Бюро Программы Развития ООН, 2002.

սոցիալական արդարության և գենդերային հավասարության չափանիշների մշակման և կիրառման հետ: Շատ երկրներ օգտագործում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ GDI (Gender based development index)՝ ընդհանուր զարգացման ցուցանիշի գենդերային բաղադիրչի հաշվառում, GEM (Gender Empowerment Measure)՝ կանանց հնարավորությունների ընդլայնման ցուցանիշ:

Գենդերային մոտեցման տեսանկյունից մակրոտնտեսությունում առավել մեծ ուշադրություն պետք է դարձվի՝

- Կանանց տնային աշխատանքի (այսինքն այն աշխատանքը, որը չունի շուկայական արժեք) ներառմանը հաշվետվության ազգային համակարգերում:
- Գենդերային հավասարության և սոցիալական արդարության գաղափարների ներառմանը պետական բյուջեի և ռեսուրսների բաշխման գործընթացում:

Աղքատության գենդերային առանձնահատկությունները

2012թ. Համաշխարհային բանկի կողմից իրականացված հետազոտության համաձայն Հայաստանի բնակչության 35% աղքատ էր, 20% շատ աղքատ և 4%՝ չափազանց աղքատ:

Աղքատների մեջ կանանց տոկոսը միտում ունի աճելու: 2008թ. աղքատների մեջ կանանց կողմից գլխավորվող տնային տնտեսությունների թիվը կազմում էր 31%, իսկ 2011թ.՝ 47%:

Մասնակցությունը որոշումների կայացման մակարդակում

Գենդերային տեսանկյունից հավասարակշռված մասնակցությունը ենթադրում է ոչ միայն կանանց և տղամարդկանց հավասար քանակական ներգրավվածություն որոշումների կայացման բնագավառում, այլ նաև մասնակցության հավասար որակ, այսինքն, հավասար քաղաքական, տնտեսական և վարչական իշխանության առկայություն:

Այս տեսանկյունից չափազանց կարևոր է դառնում՝

- Քաղաքականության բնագավառում լիդեր-կանանց վերաբերյալ կարծրատիպերի վերացումը և այսպես կոչված «գենդերային չեզոք» միջավայրի ստեղծումը:
- Ժամանակավոր միջոցառումների ներդրումը, մասնավորապես՝ քվոտաների:
- Բարձր քաղաքական կարգավիճակ ունեցող կանանց դրական օրինակների ստեղծումը:
- Քաղաքականության մեջ կանանց արդյունավետ մասնակցության հմտությունների զարգացումը, օրինակ՝ արդյունավետ ղեկավարման, բանակցություններ վարման և այլն:

Կանայք որոշումների կայացման մակարդակում

Ազգային ժողով՝ 14 կին:

Կին դատավորներ՝ 21%:

Կին իրավաբաններ՝ 39%:

Կին նախարարներ և փոխնախարարներ՝ 10%:

Չկա կին մարզպետ:

Չկա կին քաղաքապետ, ավագանու կին անդամներ՝ 8.3%:

Զբաղվածություն

Կանանց տնտեսական կարգավիճակի բարելավումը անխոս հանդիսանում է կանանց զարգացման և առաջխաղացման կարևորագույն գործոն: Գենդերային մոտեցման տեսանկյունից այս բնագավառում առավելապես արդյունավետ կարող է լինել աշխատաշուկայում կանանց դերի ուսումնասիրությունը, կանանց համար վերապատրաստման դասընթացների կազմակերպումը, ինչպես նաև հատուկ ծրագրերի մշակումը՝ ուղղված կանանց համար փոքր բիզնեսի և ձեռներեցության զարգացմանը:

Աշխատաշուկա ՝ 2011 թ. տղամարդկանց 51% և կանանց 49% տնտեսապես ակտիվ են եղել աշխատաշուկայում:

Գործազրկության պատճառները: Կանանց համար չաշխատելու հիմնական պատճառը երեխաներին խնամելն է /98%/, իսկ տղամարդկանց համար՝ Հայաստանը լքելու մտադրությունը: Գործատու կանայք կազմում են 22%, այն դեպքում երբ տղամարդիկ՝ 78%: Միջին ամսեկան աշխատավարձը կանանց համար կազմում է 59.061 դրամ, իսկ տղամարդկանց՝ 93.936 դրամ: Ամուսնալուծված անձանց շրջանում գործազուրկ են կանանց 86%, իսկ տղամարդկանց՝ 13%:

Կրթություն

Ընդնահուր առմամբ կրթության բնագավառում գենդերային հավասարության ապահովան հիմնական չափանիշ է հանդիսանում կանանց և տղամարդկանց հավասար ներգրավվածությունը կրթության բոլոր մակարդակներում: [4] Սակայն գենդերային ուղղորդման հիմնական տարրերը այս բնագավառում կայանում են ոչ միայն կանանց և տղամարդկանց հավասար ներգրավածությունը միջնակարգ, բարձրագույն և ետբարձրագույն կրթական մակարդակներում, այլ ընդհանրապես գենդերային ուսուցման տարածումը, գենդերայն դասընթացների ներմուծումը դպրոցներ և բուհեր, ինչպես նաև կրթական ծրագրերի և ուսուցողական նյութերի վերանայումը գենդերային տեսանկյունից:

Կանանց թիվը գերազանցում է բակալավրիատի մակարդակում, նույնիսկ մագիստրատուրայում /69% և 31%/, սակայն ասպիրանտուրայում զգալիորեն նվազում է /43% և 56%/, իսկ գիտությունների թեկնածուների մակարդակում պատկերը հետևյալն է՝ 25% կին և 75% տղամարդ:

Առողջապահություն

Առողջապահական ոլորտում գենդերային հավասարությունը ենթադրում է, թե կանանց, թե տղամարդկանց առողջական վիճակի բարելավում, մասնավորապես կանանց վերարտադրողական առողջության ապահովմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացում, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության երևույթի կանխարգելում (այդ թվում նաև հասարակական գիտակցության

[4] ê³Ï³ÛÝ, Ù»ñ »ñÏñÇ, ÇÝãå»ë Ý³¨ ²äÐ-Ç »ñÏñÝ»ñÇ Ù»Í³Ù³ëÝáõÃÛ³Ý Ñ³Ù³ñ ³Û¹ Ñ³ñóÁ ãÇ Ñ³Ý¹Çë³ÝáõÙ ³é³çÝ³ÛÇÝ, ù³ÝÇ áñ ÏñÃáõÃÛ³Ý ·ñ»Ã» µáÉáñ Ù³Ï³ñ¹³ÏÝ»ñáõÙ Ï³Ý³Ýó ù³Ý³ÏÁ ÝáõÛÇÝëÏ ·»ñ³ÏßéáõÙ ¿ ïÕ³Ù³ñ¹Ï³Ýó ù³Ý³ÏÁ:

բարձրացում հիմնախնդրի վերաբերյալ) և բռնության զոհերին սոցիալական, հոգեբանական և բժշկական աջակցության ցուցաբերում:

Օրենսդրություն և մարդու իրավունքներ: Գենդերային հավասարության իրավաբանական հիմքը հանդիսանում է տվյալ երկրի սահմանադրությունը: Գենդերային ուղղորդումը արդարադատության բնագավառում ենթադրում է հետևյալ միջոցառումների իրագործում՝

- օրենսդրության և բոլոր օրինագծերի գենդերային փորձաքննության իրականացում
- գենդերային հավասարության ոլորտում օրենսդրության և ներկայիս իրավիճակի համապատասխանեցում
- միջազգային հռչակագրերի և փաստաթղթերի վավերացում, մասնավորապես, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» հռչակագրի վավերացում և կիրառում
- արդարադատության համակարգի ներկայացուցիչների, իրավապահ մարմինների իրազեկության բարձրացում գենդերային զգայունության և հանդուրժողականության բնագավառում
- հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացում:

Զանգվածային լրատվական միջոցներ՝

Քանի որ ԶԼՄ-ները կարևորագույն դեր են խաղում գենդերային դերերի և կարծարտիպերի ստեղծման և վերարտադրման գործընթացում, ուստի գենդերային հիմնահարցերը պետք է ակտիվորեն ներդրվեն ԶԼՄ-ների քաղաքականության մեջ: Դա նշանակում է, որ պարբերաբար պետք է իրականացվի բոլոր ծրագրերի և գովազդների գենդերային վերլուծություն, կազմակերպվեն դասընթացներ լրագրողների համար՝ գենդերային հիմնախնդիրները ճիշտ ներկայացնելու համար:

Մաս 2. Գենդերային բյուջետավորում:

Գենդերային տեսանկյունից պատասխանատու բյուջետավորումը ուղղված է գենդերային ուղղորդումից հասարակական ֆինանսներ: Գենդերային տեսանկյունից պատասխանատու բյուջետավորման գործընթացն ի վերջո բերում է գենդերային

տեսանկյունից պատասխանատու բյուջեներ: Դրանք կանանց համար առանձին բյուջեներ չեն, այլ բյուջեներ, որոնք պլանավորված են, հաստատված, իրականացված, վերահսկված եւ ստուգված գենդերային տեսանկյունից պատասխանատու ճանապարհով:

Գենդերային հեռանկարային բյուջեն դիտարկելիս պետք է տարբեր կողմեր հաշվի առնել:

Շատ երկրներում եկամուտների մեծ մասը ծախսվում է հանրային զբաղվածության վրա: Արդյոք կանայք ներառված են հանրային կյանքում նույն չափով եւ դասակարգումով, որքան տղամարդիկ, արդյոք հավասարապես օգտվում են հանրային եկամուտներից:

Կանայք՝ որպես հանրային ծառայություններից օգտվողներ, կարող են ունենալ տղամարդկանցից տարբեր կարիքներ եւ առավելություններ իրենց տարբեր սոցիալական դերերի եւ պատասխանատվությունների պատճառով: Արդյոք նրանք հավասարապես են ընդգրկվում:

Կառավարությունը գումարներ է փոխանցում վճարումների կամ նպաստների տեսքով՝ առանձին ընտանիքներին, սոցիալական ապահովագրության, բնական աղետների հետևանքով տուժածներին և այլոց: Արդյոք կանայք ունեն այս վճարումների նկատմամբ նույն իրավունքները, ինչ տղամարդիկ:

Կանայք և տղամարդիկ ունեն ժամանակի օգտագործման տարբեր եղանակներ: Փաստ է, որ կանայք ավելի շատ ժամանակ են ծախսում չվճարվող աշխատանք կատարելու համար, քան տղամարդիկ: Չնայած կանայք շաբաթական ավելի շատ ժամեր են աշխատում, քան տղամարդիկ: Բյուջետային սահմանափակումները կարող են աճեցնել կամ նվազեցնել երկու սեռի աշխատանքային ծանրաբեռնվածությունը:

Գենդերային տեսանկյունից պատասխանատու բյուջետավորումը հաշվի է առնում չվճարվող խնամակալական աշխատանքը, ինչն ամբողջ աշխարհում կանանց կողմից է կատարվում: Չվճարվող խնամակալական աշխատանքն ընդգրկում է այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են տնային տարբեր աշխատանքները, երեխաների խնամքը եւ մյուսների նկատմամբ հոգատարությունն ու խնամքը ընտանիքում, որը

իրականացվում է անվճար:

Այսպիսով, խնամակալական տնտեսությունը մնում է անտեսանելի, մինչդեռ այն ունի մեծ կարևորություն շուկայի տնտեսության գործառնման համար և հասարակության սոցիալական հիմքի պահպանման համար:

Գենդերային տեսանկյունից պատասխանատու բյուջետավորում

- այն բանի մասին չէ, թե արդյոք հավասար գումար է ծախսված կանանց եւ տղամարդկանց վրա, այլ նրա թե արդյոք ծախսվածը համապատասխան է կանանց եւ տղամարդկանց կարիքներին:
- առաջարկի նմուշ պարունակելով՝ պլանավորված է իրականացնելու ծախսեր և ունենալու եկամուտներ՝ հաշվի առնելով կանանց և տղամարդկանց տարբեր կարիքները:
- վերջապես արդյունքն է գենդերային տեսանկյունից պատասխանատու բյուջե, այլ ՈՉ կանանց համար առանձին:

Գենդերային վերլուծություն:

Գենդերային վերլուծությունը հնարավորություն է տալիս որոշել կանանց և տղամարդկանց տարբերությունները կախված նրանց գործողություններից, պայմաններից, կարիքներից, ռեսուրսների հանդեպ ունեցած վերահսկողությունից և հասանելիությունից, ինչպես նաև զարգացման և որոշումների կայացման վերաբերյալ հնարավերություններից:

Գենդերային վերլուծության հայեցակարգերը և վերլուծության միջոցները՝

Ազդող գործոններ՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական, էկոլոգիական, իրավական, մշակութային:

Աշխատանքի գենդերային բաժանում՝ սեզոնային բաժանում, ժամանակի օգտագործում, աշխատանքի ծավալ, վերարտադրողական /արտադրողական, համայնքի կառավարում /քաղաքականություն, վճարովի /անվճար:

Ռեսուրսների կառավարման հասանելիություն՝ բնական, ֆիզիկական, հոգևոր, մարդկային, շուկայական, սոցիո – մշակութային:

Որոշումներ կայացնելու ունակություններ՝ տնային տնտեսության մակարդակը, քաղաքական մակարդակը /համայնք և նահանգ/, համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպություններ:

Գենդերային կարիքներ՝ պրակտիկ կարիքներ, ռազմավարական հետաքրքրություններ:

Ինստիտուցիոնալ վերլուծություն՝ քաղաքականություն և ծառայություններ, կազմակերպչական կառուցվածք, աշխատակազմի որակավորում /կադրեր:

Ռազմավարական մոտեցում՝ բարեկեցություն, արդարություն, աղքատության կրճատում, արդյունավետություն, ռեսուրսների զարգացում:

Մասնակցության աստիճան՝ բարեգործություն, օգուտ, աշխատանքի ներդրում, խնդրի վերաբերյալ խորհրդատվություն, ռեսուրսների զարգացում:

Մաս 3. Գենդերային մոնիթորինգ:

3.1. Մոնիթորինգ: Իրադարձությունների մշակման /գենդերային զգայուն/ հսկողություն:

Մոնիթորինգը հանդիսանում է գենդերային ուղղորդման անբաժան մասը: Գոյություն ունեն մոնիթորինգի 3 հիմնական մասեր՝

1. Մոնիթորինգի մակարդակներ:
2. Մոնիթորինգի պլանավորում գենդերային տեսանկյունից:
3. Խնդիրներ և ցուցանիշներ, որոնք հաշվի են առնում գենդերային ասպեկտները:

3.1.1. Մոնիթորինգի մակարդակները

- Սահմանված նպատակների եւ խնդիրների առաջխաղացման մոնիտորինգ
- Իրականացման մոնիթորինգ

Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ մակարդակի համար անհրաժեշտ է մշակել նպատակներ եւ ցուցանիշներ՝ չափելու համար նպատակներին հասնելու ճանապարհը:

Իրականացման գործընթացի մոնիթորինգի անցկացման ժամանակ նպատակներն ու ցուցանիշները պետք է վերահսկեն, թե ինչ մակարդակով է գործընթացը հաշվի առնում գենդերային ասպեկտը: Գործընթացի մոնիթորինգը ձեզ կօգնի՝

- Որոշել ծրագրի իրականացման գործընթացում առկա խոչընդոտներն ու խնդիրները եւ առանց հապաղելու համապատասխան միջոցառումներ ձեռնարկել:
- Կատարելագործել ձեր ապագա նախաձեռնությունները:
- Ֆիքսել առաջացած դժվարությունները, որոնք հետագայում կարող են հանդես գալ ավելի լայն ինստիտուցիոնալ կոնտեքստում:

Հարցեր, որոնք մոնիթորինգի ժամանակ հնարավոր է անհրաժեշտ լինի վերանայել՝

- Արդյո՞ք կանայք եւ տղամարդիկ հավասար մակարդակով են մասնակցություն ունենում ծրագրի շրջանակներում որոշումների ընդունմանը:
- Արդյո՞ք նույնն է կանանց եւ տղամարդկանց վերաբերմունքը որպես ղեկավարի, կատարողի եւ մասնակցի:
- Արդյո՞ք առկա են մշտական դրդապատճառներ գենդերային տեսանկյունը ուշադրության կենտրոնում պահելու համար (հնարավորություններ բարելավել ձեր գիտելիքները գենդերային տեսության շրջանակներում և քննարկել գենդերային հարցեր դրա համար բարենպաստ մթնոլորտում):

3.1.2. Մոնիթորինգի պլանավորում գենդերային տեսանկյունից

Մոնիթորինգի առաջընթացի և գործընթացի իրականացման պլանները պետք է մշակված լինեն և ընդգրկվեն ձեր ծրագրի վերաբերյալ պաշտոնական փաստաթղթերում: Մոնիթորինգի պլաններում պետք է հստակ նշված լինեն.

- ով է պատասխանատու մոնիթորինգի համար
- ինչպես պետք է մոնիթորինգին մասնակցեն այլ հետաքրքրված անձինք (օրինակ՝ գենդերային փորձագետները)

- երբ պետք է իրականացվի մոնիթորինգը
- ինչպես պետք է ֆիքսվեն արված հետազոտությունները
- ինչպիսի մեխանիզմներ կան ծրագրի զարգացման գնահատման համար:

3.1.3. Խնդիրներ և ցուցանիշներ, որոնք հաշվի են առնվում գենդերային տեսանկյունից՝

Խնդիրներ: Մենք սահմանում ենք խնդիրներ՝ հիմնվելով մեր նպատակների վրա: Խնդիրները կոնկրետացնում են մեր նպատակները, հետևաբար և բարձրացնում են այդ նպատակներին հասնելու հավանականությունը: Ինչպես նաև հստակ խնդիրները բերում են ռեսուրսների (մարդկային եւ ֆինանսական) նպատակահարմար օգտագործման:

Խնդիրները արդյունավետ են, եթե նրանք՝

- Առաջադեմ են, բայց ռեալ:
- Ունեն դրանց հասնելու համար սահմանված ժամկետներ:
- Ենթակա են չափման:

Բացատրություն: Գենդերային հեռանկար նշանակում է, որ արդյունավետ խնդիրները նույնպես հաշվի են առնում հիմնախնդրի գենդերային տեսակետը. դիտարկում են ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց դիրքն ու պահանջները:

Խնդիրների լուծման առաջընթացը պետք է չափվի և լուսաբանվի համապատասխան ցուցանիշներով:

Ցուցանիշները արդյունավետ են, եթե դրանք.

- Դինամիկ են և ժամանակի հետ համեմատական: Չափվում են միայն մեկ անգամ և թույլ չեն տալիս հետևել իրադարձությունների զարգացմանը:
- Համեմատական են մյուս երկրների, շրջանների և նպատակային լսարանների հետ: Անհրաժեշտ է գնահատել արդյունքները որակապես և քանակապես:
- Հստակ են: Պետք է ընտրել այնպիսի ցուցանիշներ, որ արտաքին գործոնները, որոնք չի պլանավորում չափել, այդ ցուցանիշների վրա ցուցաբերեն նվազագույն ազդեցություն:

- Ընտրական և ներկայացուցչական են: Չափազանց մեծ քանակությամբ ցուցանիշները դժվար է ուսումնասիրել միաժամանակ:

Բացատրություն: Ծրագրերում և ռազմավարություններում, որոնք ունեն գենդերային մոտեցում, բոլոր ցուցանիշները հնարավորության դեպքում պետք է առանձնանան սեռի հատկանիշով: Դա օգնում է որոշել, թե մեր միջոցառումներն ինչպիսի ազդեցություն ունեցան առանձին տղամարդկանց և կանանց վրա:

3.2. Գենդերային գնահատում: Ինչ հաջողությունների հասանք: Մոնիթորինգն իր գագաթնակետին է հասնում կատարված աշխատանքների գնահատման ժամանակ: Այս փուլը կարևորվում է հաջողված փորձի և բացթողումների ամրապնդմամբ, որոնք են ձեռք բերվել ձեր նախաձեռնությամբ, և որոնք կարելի է օգտագործել ապագայում աշխատանքի մեթոդի կատարելագործման համար: Գնահատումը նաև կապված է օգտագործված ռեսուրսների հաշվետվության հետ:

Գնահատման 3 մակարդակներն ընդգրկում են

1. **Ներդրումների** գնահատում (հաջողվեց արդյոք հասնել նպատակին):
2. **Արդյունքների** գնահատում (ինչ չափով հաջողվեց սահմանված նպատակներին հասնել զարգացման ոլորտում):
3. **Աշխատանքի ընթացքի** գնահատում (ինչպես իրականացվեցին միջոցառումները եւ ինչ արդյունքներ եղան):

Գենդերային հեռանկարի նպատակադրված ընդգրկումն ապահովելու համար գնահատման բոլոր մակարդակներում պետք է հաշվի առնել հետեւյալ հիմնական հարցերը՝

Չափանիշներ գնահատման համար

- Ով է առանձնացնում գնահատման համար չափանիշները:
- Որքանով են համարվում կարեւոր կամ հեռանկարային գենդերային հավասարության հիմնախնդիրները:

Գնահատումն անցկացնող մասնակիցները

- Արդյոք ծրագրի տեխնիկական առաջադրանքի մեջ մտնում է այն մասնակիցների՝ գենդերային հետազոտությունների ոլորտում հատուկ

պատրաստվածության պահանջը, ովքեր իրականացնում են ծրագրի գնահատում:

- Արդյոք ծրագրի գնահատմանը մասնակցում են բոլոր հետաքրքրված կողմերը:
- Ով է տրամադրում տվյալներ ծրագրի գնահատման համար:
- Արդյոք ուշադրություն կդարձվի տղամարդկանց և կանանց կարծիքների վրա:
- Ով է պատասխանատու բոլոր ստացված տվյալների, տարբեր կարծիքների եւ գաղափարների հիմնավորվածության եւ հեռանկարայնության ընդգծման համար:

Գնահատման գործընթացը

- Արդյոք կկիրառվի համատեղ աշխատանքի մեթոդը:
- Ինչպես եւ ում համար են տարածվելու ծրագրի գնահատման ընթացքի արդյունքները:
- Արդյոք հնարավորություն կընձեռվի բոլոր հետաքրքրված կողմերին՝ եւ կանանց, եւ տղամարդկանց, պաշտոնապես արտահայտել իրենց գաղափարները կամ առարկությունները ծրագրի գնահատման արդյունքների վերաբերյալ:

Գլուխ II: ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Բռնությունը ակտ է, որի նպատակն է դիմացինին ենթարկեցնել սեփական պահանջներին՝ օգտագործելով ուժ, ստիպողականություն, իշխանություն կամ սպառնալիք:

Բռնությունը մարդու իրավունքների ոտնահարումը, որը կարող է իրականանալ, ինչպես ֆիզիկական ուժի ուղեկցությամբ, այնպես էլ՝ առանց, որն իրականվում է մի անձի կամ խմբի կողմից մյուսի հանդեպ, առանց վերջինիս համաձայնության:

Կանանց նկատմամբ բռնությունը տարբեր ձև է ընդունում նրանց կյանքի ընթացքում՝

- **Նախածննդյան շրջան՝ սեռի վրա հիմնված աբորտ /աղջիկների աբորտը գերակշռում է/**
- **Մանկություն՝ ինցեստ /ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ամբողջ աշխարհում ինցեստի ենթարկված երեխաների սեռային հարաբերակցությունը 5 աղջիկ - 2 տղա է, աղջիկների մարմնավաճառություն և պորնոգրաֆիա:**
- **Հասունություն՝ սեռական չարաշահում աշխատավայրում, թրաֆիքինգ, զուգընկերոջ կողմից բռնություն, ընտանեկան բռնություն, ստիպողական մամրնավաճառություն և հղիություն:**

Մաս 1. Բռնության տեսակներ: Տարբերում են բռնության հետևյալ հիմնական տեսակները՝

- **Ֆիզիկական՝** կծել, կճմտել, մազերից քաշել, հրել, խեղդել, թափահարել, այրել, ծեծել, հարվածել՝ ձեռքով, ոտքով:
- **Հոգեբանական՝** հայացք, վիրավորանք, ստորացում, ազատության սահմանափակում, կատակ, առաջարկություն:
- **Տնտեսական՝** զբաղմունքի, աշխատանքի ընտրության կառավարում, աշխատավարձի տնօրինում, տնային տնտեսության վարման մեջ ձայնից զրկում, ընտանեկան ֆինանսների տնօրինման գաղտնիություն, գումարից զրկել:
- **Սեռական՝** սեռական ոտնձգություն, սեռական օրգանների ցուցադրում, պարտադրական նկարահանումներ, ֆիզիկական կոնտակտ հանրային վայրում /ֆրոտաժ/, գաղտնի հետեևում /վուաերիզմ/:

ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆԶԳՈՒԹՅՈՒՆ: Ցանկացած գործողություն, որը դիմացինի մոտ առաջացնում է անհանգստություն՝ հայացքներ, հպումներ, շոշափումներ, առաջարկներ, կատակներ, սպառնալիքներ:

ՍԵՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ հասարակական վայրերում՝ այգիներում, ճանապարհին, շենքերի պատշգամբներում և այլուր: Ցուցադրումը իրականացվում է այնպիսի տեղերում, որտեղ տղամարդկանց հանդիպելու հավանականությունը նվազագույնն է:

ՊԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐ զոհի մասնակցությամբ կամ երբ բռնարարը ստիպում է դիտել պոռնոգրաֆիկ նյութեր, ֆիլմեր:

ՖՐՈՏԱԺ (ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՆՏԱԿՏ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԱՅՐՈՒՄ)՝ սեռական օրգանների շփում մյուսի մարմնի տարբեր մասերին:

ՎՈՒԱԵՐԻԶՄ (ԳԱՂՏՆԻ ՀԵՏԵՎՈՒՄ), դիտում՝ օրինակ՝ շորերը փոխելիս, լողանալիս և այլն:

ԲՌՆԱԲԱՐՈՒԹՅՈՒՆ /ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԲՌՆԱԲԱՐՈՒԹՅՈՒՆ

- Բռնաբություն՝ օրալ, անալ, գենիտալ կոնտակտ՝ ներթափանցում առնանդամով կամ որևէ այլ առարկայով:
- Ամուսնական բռնաբարություն՝ սեռական ակտի իրականացում՝ հակառակ զուգընկերուհու կամքին, որն ունենում է հետևյալ ձևերը՝ խորամանկությամբ ստանալ սեռական հարաբերությունների թույլտվություն, ստիպել զուգընկերուհուն մասնակցել այնպիսի գործողությունների, որոնք նա համարում է անընդունելի, դաժան սեռական հարձակումներ ծեծի, ցավ պատճառող այլ գործողությունների ուղեկցությամբ:

Մաս 2. Բռնության հետևանքները:

Ֆիզիկական հետևանքներ՝ կոտրվածք, արյունահոսություն /ներքին, արտաքին/, կապտուկ, քերծվածք, այրվածք, մարմնական, ներքին օրգանների վնասվածք, սեռական օրգանների վնասվածքներ:

Հոգեսոմատիկ հետևանքներ՝ մաշկային ալերգիա, ցան, ճնշման տատանումներ, շնչարգելություն, փորկապություն /փորլուծություն, փսխոց, փորացավ:

Հոգեբանական հետևանքներ՝ անվստահության, անապահովության զգացում, ցածր ինքնագնահատական, բարկության զգացում, ամոթի զգացում, մեղքի զգացում, թերարժեքության զգացում, վախի զգացում, շփման խանգարումներ, ճնշվածություն, դեպրեսիա:

Վարքային խնդիրներ՝ ագրեսիա, ոչ ադեկվատ դաժանություն, թմրանյութերի կամ ալկոհոլի չարաշահում, ախորժակի խանգարումներ, քնի խանգարումներ, մեկուսացում կամ հակառակը, խնդիրներ միջանձնային հարաբերություններում:

Սեռական ոլորտի խնդիրներ՝ սեռավարակներ (նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ), սեռական ցանկության ակտիվացում, վագինիզմ, ֆրիգիդություն, անցանկալի հղիություն, ՍՃՓՀ:

Կարևոր հարցեր հիշելու համար՝

- *ճշտել, թե բռնության ինչ հետքեր/նշաններ կան, դրանք պահպանելու նպատակով՝ կապտուկներ, պատռված կամ կեղտոտված հագուստ և այլն*
- *միայն 72 ժամվա ընթացքում կարելի է խմել հղիացումը կանխող հաբեր, որոնց մասին պետք է հարցնել բժիշկի*
- *ստուգել հավանական սեռավարակների առկայությունը*
- *զգուշացնել, որ ՁԻԱՀ-ի առկայությունը կարելի է ստուգել միայն դեպքից 3 ամիս անց*
- *եթե խորհրդատուն չի կարող ճշտել բռնաբարության ձևը, անպայման նշել, որ սեռավարակների առկայությունը պետք է ստուգել թե գենիտալ, թե անալ և օրալ ներթափանցման դեպքում*
- *եթե բռնաբարության ժամանակ զոհը եղել է անգիտակից, պետք է շտապ ստուգել արյան բաղադրությունը, քանի որ թմրեցնող նյութերը որոշ ժամանակ պահպանվում են արյան մեջ:*

Մաս 3. Սեռական բռնություն երեխայի նկատմամբ: Ինցեստ:

Սեռական հարաբերությունների կամ կոնտակտի իրականացում մտերիմ կամ արյունակցական կապեր ունեցող անձանց միջև:

- Ինցեստի ենթարկվում են և իգական, և արական սեռի երեխաները:
- Շատ մարդիկ խուսափում են այդ մասին խոսելուց, քանի որ դա կատարվում է ընտանիքի կամ մտերիմ շրջապատի ներսում:

Երեխաների մոտ սեռական բռնության նշաններ՝

Ֆիզիկական՝ արտազատումներ կամ արյունահոսություն հեշտոցից/հետանցքից, ցավ, քոր կամ այտուցվածություն, վարակներ, գորտնուկներ կամ ՍՃՓՀ, դժվար, ցավով ուղեկցվող միզարտադրություն կամ արտաթորանք, դեռահասի հղիություն, երբ հոր ինքնությունը անհայտ է, կապտուկներ, ծեծի հետքեր կամ այլ վնասվածքներ կրծքերին, հետույքին, որովայնի ներքին հատվածներում, սերմնահեղուկ հեշտոցում,

հետանցքում, ստամոքսի կամ որովայնի կրկնվող ցավեր, գլխացավեր, քայլելու կամ նստելու հետ կապված դժվարություններ:

Հոգեբանական՝ ինքնասպանության մտքեր, աղքատիկ միջանձնային հարաբերություններ, ինքնավստահության անկում, մեկուսացում, ագրեսիա, գիշերային մղձավանջներ և քնի խանգարումներ, հաճախակի վախեր մթությունից, անբացատրելի վախ որևէ անձից կամ խնամակալից, դեպրեսիա, անհանգստություն, ռեգրեսիվ վարք /օրինակ՝ գիշերամիզություն, մեկուսացում, վտանգավոր վարք/:

Վարքային փոփոխություններ՝ փոփոխություններ ուտելու սովորության մեջ կամ ախորժակի բացակայություն, թեթևաբարո վարք, պոռնկություն, ինքնավնասման գործողություններ, ինքնասպանության փորձեր, հաճախ դիտվող փախուստի փորձեր, փոփոխություններ առօրյա հագուստի մեջ, փոփոխություններ հիգիենայի մեջ, խուլիգանություն, գողություն, թմրադեղերի կամ ալկոհոլի օգտագործում, անընդհատ լողանալու հակում, անբնական գիտելիքներ սեռականության վերաբերյալ կամ անսովոր ուշադրություն մեծահասակների սեռական հարաբերությունների, օրգանների նկատմամբ, հասուն սեռական վարքի դրսևորում, սեռականության բաց ցուցադրություն /օրինակ՝ հանրության առջև մաստուրբացիաներ/, հաճախակի ստախոսություն կամ վիրավորանքներ:

Ինչու երեխան չի խոսում / բռնարարի ռազմավարություն:

- Երեխայի համար դժվար է խոսել սեռականության մասին, անգամ երբ խոսքը վերաբերվում է բռնությանը /տհաճ և ցավ պատճառող սեռականություն/:
- Երեխան ունենում է վախի, անվստահության, մեղքի և ամոթի զգացում:
- Բռնարարները օգտագործում են ֆիզիկական և հոգեբանական հարկադրանքներ, ներառյալ սպառնալիքներ և կաշառքներ, որպեսզի ստիպեն իրենց զոհերին լռել:
- Բռնարարը հավատացնում է, որ պատմելու դեպքում նրան կատեն, կմերժեն կամ ուղղակի չեն հավատա:
- Բռնարարը սպառնում է երեխային կամ այն մարդուն, ում երեխան սիրում է:
- Նա երեխային վախացնում է, որ պատմելով՝ կվերացնի ընտանեկան անձեռնմխելիությունն ու ներդաշնակությունը:

Մաս 4: Ընտանեկան բռնություն:

Ընտանեկան բռնությունը ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական բռնության կիրառումն է:

Ընտանեկան բռնությունը ունի գենդերային հիմք. ցանկացած հասարակության մեջ տարածված է տղամարդու կողմից բռնությունը կնոջ նկատմամբ: Տղամարդը կիրառում է բռնություն իր կնոջ նկատմամբ իշխանության հաստատման և վերահսկողության նպատակով:

Ինչպես է հաստատվում կնոջ նկատմամբ իշխանություն ընտանիքում՝ վախեցնում, էմոցիոնալ շահագործում, մեկուսացում, ժխտում, մեղադրում, ստորացում, երեխաների շահագործում, «տղամարդկային առավելությունների» շահագործում, տնտեսական շահագործում, սպառնալիքի և ստիպողականության կիրառում:

Ընտանեկան բռնությունը ունի ցիկլային բնույթ: Ընտանեկան բռնության ցիկլերն են՝

1. Լարվածություն, երբ կուտակվում է ջղայնություն, անհասկացվածություն
2. Բռնություն, երբ կոնկրետ գործողություններ են իրականացվում՝ բղավել, վիրավորել, հայհոյել, ֆիզիկական ուժի կիրառում
3. Մեղրամիս, երբ սկսվում է մեղքի զգացման, ներողությունների, նվերների շրջան: Երբ բռնարարը սկսում է ներողություն խնդրել իր արածների համար, նաև ներկայացանել կատարվածը իր ցանկությունից և վերահսկողություն դուրս:

Ցիկլերը հաջորդում են միմյանց և հիմնականում մեղրամսի փուլից հետո կրկին հաջորդում են լարվածության, իսկ հետո նաև բռնության ցիկլերը և այդպես պարբերաբար կրկնվում են:

Կան մի շարք պատճառներ, թե ինչու են կանայք մնում բռնարարի հետ՝ չնայած նրան, որ որպես կանոն բռնության ենթարկվող կանայք հեռանում են բռնարարից, սակայն վերադառնում են մեղրամսի փուլում:

Պատճառները հետրյալն են՝ տնտեսական կախվածություն, երեխաներից զրկվելու վախ, այլընտրանքային ապրուստի բացակայություն, աշխատանքային հմտությունների բացակայություն, սոցիալական մեկուսացում, ոստիկանության, դատարանի, սոցիալական աշխատողների կողմից բացասական արտահայտումները, անորոշության նկատմամբ վախ, ընտանիքի ճնշումը, հեռացումը պահանջում է պլանավորման ժամանակ: Ինչպես նաև մի շարք զգացումներ՝ անապահովության զգացում, լոյալ վերաբերմունք բռնության նկատմամբ, մերժում, սեր, մեղքի զգացում, ամոթ ու նվաստացման զգացում այլ մարդկանց մոտ, ոչ իրատեսական օպտիմիզմ, պատասխանատվության զգացում, ցածր ինքնագնահատական, հուզականան աջակցության բացակայություն:

Ընտանեկան բռնության հիմնական պատճառներն են՝ ուսուցանվում է դիտարկումների հիման վրա, ուսուցանվում են փորձի և ամրապնդման միջոցով, ուսուցանվում է մշակույթում, ուսուցանվում է ընտանիքներում, ուսուցանվում է համայնքներում, դպրոցումներում, աշխատանքային վայրում:

Չնայած վերը նշվածի՝ հաճախ մարդիկ շփոթում են ընտանեկան բռնության պատճառները տարբեր սովորույթների և ընտանեկան բռնության հետ ուղեկցվող այլ երևույթների հետ, ինչպիսիք են՝ ալկոհոլը, գենետիկան, հիվանդությունը, զայրույթը, սթրեսը, զոհի վարքը, պրոբլեմային հարաբերությունները:

Ինչ է կորցնում կինը բռնության հետևանքով՝

- կյանքը, առողջությունը, շատ հաճախ ընտանիքը, կրթությունը, աշխատանքը, պրոֆեսիոնալիզմը, հարգանքը հասարակության մեջ, (անձի հնարավոր դեգրադացիա, հանցագործություն, մարմնավաճառություն, թմրամոլություն, ալկոհոլիզմ):

Ինչ է կորցնում ընտանիքը՝

- լիարժեք սերունդ, երեխաների նորմալ դաստիարակություն, տնտեսական կարգավիճակի իջեցում, ընտանիքի ստեղծագործ ֆունկցիա, որն էլ բերում է ընտանեկան հարաբերությունների քայքայմանը:

Ինչ է կորցնում հասարակությունը՝

- անհատ, լիարժեք աշխատող, ընտանիքը որպես հասարակության բջիջ և որպես հետևանք՝ աշխատանքային և մտավոր ռեսուրս, կայունություն և վերջապես զարգացման պոտենցիալ:

Ինչ է կորցնում պետությունը՝

- առաջին հերթին իր իրավական դեմքը (իմիջը) և ամենակարևորը սոցիալական և քաղաքական անվտանգությունը:

Մաս 5. Հասարակության մեջ առկա միֆեր՝ կեղծ մտքեր, բռնության տարբեր տեսակների վերաբերյալ՝

Կինն է հրահրում բռնություն ու արժանի է դրան:

Կինը, ով ենթարկվում է բռնության, հեշտությամբ կարող է հեռանալ բռնարարից:

Բռնարար տղամարդը բոլորի հետ է ագրեսիվ ու կոպիտ:

Բռնություն կիրառող տղամարդիկ անհաջողակներ են:

Բռնության պատճառն ալկոհոլն է:

Բռնարարները հոգեկան հիվանդ մարդիկ են:

Բռնաբարողները անծանոթ մարդիկ են, որոնք թաքնվում են նեղ կամ մութ փողոցներում:

Կինը, որը ենթարկվում է սեռական ոտնձգության, կարող է ազատվել իր բռնարարից, եթե ամբողջ ուժով պայքարի:

Եթե կինը համաձայնվում է սեռական հարաբերության՝ զուգընկերոջը չնեղացնելու համար, դա բռնաբարություն չէ:

Բռնաբարությունը հազվադեպ հանդիպող հանցագործություն է:

Բռնաբարությունը կատարվում է որոշակի տիպի կանանց հետ, որոնք տարբերվում են ինձանից:

Բռնաբարությունը կատարվում է, քանի որ տղամարդիկ կորցնում են իրենց վերահսկողությունը:

Բռնաբարության զոհը վերադառնում է նորմալ կյանքի մի քանի շաբաթ անց:

Բռնաբարությունը իրականացվում է պահի ազդեցության տակ, դա երբեք նախապես չի պլանավորվում:

Եթե կանայք չեն դիմադրում, ապա իրականում նրանք բռնաբարված չեն կարող համարվել:

Կինը չի կարող բռնաբարվել իր ամուսնու կողմից:

Միայն կանայք են բռնաբարվում: Տղամարդիկ եթե բռնաբարվում են, ապա դա հոմոսեքսուալ դրսևորում է:

Եթե անգամ կինը համաձայնություն է տալիս անգիտակից վիճակում, դա միևնույն է համաձայնություն է, իսկ ակտը չի կարելի համարել բռնաբարություն:

Բռնաբարողին կարելի է ճանաչել արտաքինից:

Գլուխ III: Խորհրդատվություն:

Յ. Պ. Պլատոնովը առանձնացրել է 2 ուղղություն բռնության ենթարկված կանանց հետ աշխատելու համար՝

- Անհապաղ հոգեբանական օգնություն սուր տրավմայի և հետտրավմատիկ սթրեսի ուղղությամբ որպես բռնության հետևանք
- Երկարատև աջակցում անհատական կամ խմբային խորհրդատվական գործընթացում:

Անհապաղ օգնությունը իրականանում է «թեժ գծի» միջոցով, որի հիմնական խնդիրը հանդիսանում է ընտանիքի անդամների անվտանգության գնահատումը, ֆիզիկական ու հոգեբանական անվտանգության ապահովման միջոցների ձեռնարկում, ուղղուրդում իրավաբանական ու բժշկական հաստատություններին:

Երկարատև աջակցումը կամ վերականգնումը իրականանում է անհատական ու խմբային խորհրդատվության միջոցով: Խորհրդատվությունը որպես մասնագիտական գործունեություն սկսել է կիրառվել 1951թ., երբ ԱՄՆ-ում հոգեբանների կոնֆերենցիան առաջարկեց «խորհրդատվական հոգեբանություն» անվանումը: «Խորհրդատվություն» բառը բառարանում ունի մի քանի նշանակություն՝

- մասնագետների խորհուրդ ինչ-որ գործի համար և խորհուրդ, որ տրվում է մասնագետներին
- վայր, որտեղ խորհրուրդներ են տրվում:

Անհրաժեշտ է տարբերակել հոգեթերապիան ու խորհրդատվությունը: Խորհրդատվությունը առաջացել է մարդկանց այն պահանջմունքին, որոնք չունեն կլինիկական խանգարումներ. այստեղ խնդիրների տիրույթը իսկապես լայն է՝ աշխատանքում դժվարություններ, կոնֆլիկտներ աշխատակիցների ու ղեկավարների հետ, ընտանեկան անհաջողություններ:

Գոյություն ունեն բազմաթիվ մոտեցումներ՝

- Խորհրդատվությունը օգնում է մարդկանց ընտրել և գործել սեփական նախաձեռնությամբ
- Խորհրդատվությունը օգնում է սովորել նոր վարքին

- Խորհրդատվությունը նպաստում է անձի զարգացմանը
- Խորհրդատվությունում ակցենտուացվում է այցելուի պատասխանատվությունը,ընդունում է, որ անկախ, պատասխանատու անհատը ունակ է համապատասխան իրադրություններում ինքնուրույն որոշում կայացնել. խորհրդատուն պայմաններ է ստեղծում, որոնք «խրախուսում» են կամային վարք:

Կարելի է առանձնացնել հիմնական առանձնահատկություններ, որոնք տարբերվում են հոգեբանական օգնության այլ տեսակներից՝

- Կողմնորոշում դեպի առողջ մարդ, ով ունի հոգեբանական խնդիրներ ամենօրյա կյանքում
- Կողմնորոշում դեպի անձի առողջ կողմեր՝անկախ նրանից ինչպիսին է խնդիրը և հավատից, որ կարող է խնդիրը փոխվել և ինքը որոշի իր խնդիրները
- Կողմնորոշում դեպի ներկան ու ապագան
- Ուղղություն վարքի փոփոխմանն ու անձի զարգացմանը:

Խորհրդատվական նպատակներ՝

Կախված են կոնկրետ խորհրդատվական նպատակներից, ըստ այդմ հիմնական նպատակների մասին խոսելիս անդրադարձել ենք Էմմի վան Դուրցենի առաջադրած նպատակների՝

- Նպաստել վարքի փոփոխմանը, որ այցելուն կարողանա ավելի արդյունավետ, կյանքով բավարարված ապրել՝չնայած որոշ անխուսափելի սոցիալական սահմանափակումների
- Զարգացնել հմտություններ դժվարությունները հաղթահարելու համար
- Ապահովել կյանքի կարևոր որոշումների էֆֆեկտիվ ընդունումը
- Կարողություններ զարգացնել՝ միջանձնային հարաբերություններ ստեղծելու եվ պահպանելու համար
- Անձի պոտենցիալի բարձրացում ու իրականացում:

Մաս 1. Խորհրդատվության հիմնական տեսակները՝

- Ըստ օգնություն ցուցաբերելու ժամանակային ցուցանիշի տարբերում են՝ *անհետաձգելի ու երկարատև*
- Ըստ *ուղղվածության՝ անձնային կողմնորոշված ու խնդրին կողմնորոշված*
- Ըստ տարածական *կազմակերպման՝կոնտակտային, /face to face counseling/ ու դիստանտային*, որը իր հերթին բաժանվում է նամակայինի ու հեռախոսայինի
- Ըստ մասնակիցների *քանակի՝անհատական խորհրդատվություն ու խմբային խորհրդատվություն*

Մաս 2. Խորհրդատվության կառուցվածքը՝

- Առաջին Փուլը՝կոնտակտի հաստատումն է ու այցելուի կողմնորոշումը աշխատանքին /վստահական հարաբերությունների հաստատում/
- Երկրորդ Փուլը՝ տեղեկատվության հավաքագրումն է այցելուի մասին, խնդրի հասկացումը
- Երրորդ Փուլը՝ ցանկալի արդյունքի գիտակցումը
- Չորրորդ Փուլը՝ այլ տարբերակների որոշումը
- Հինգերորդ Փուլը՝ ստացված արդյունքների ընդհանրացումը

Խորհրդատվությունը սկսվում է մինչև հանդիպումը. ամեն-ինչ սկսվում է նրանից, երբ խորհրդատուն արդեն որոշակի ինֆորմացիա է տիրապետում այցելուի մասին /մինչ գալը, զանգելը/: Բացի այդ արդեն կենտրոնի անվանումը որոշակի կոնտինգենտ է ենթադրում:

Գոյություն ունեն գործոններ, որոնք նպաստում են խորհրդատվական կենտրոնի մասին որոշակի պատկերացում կազմելու վրա, օրինակ՝

- Կենտրոնի ներկայացումը ԶԼՄ-ների միջոցով
- Տեղեկատվություն, որը տարածվում է նախորդ այցելուների միջոցով
- Կենտրոնի արտաքին տեսքը և այլն:

Երկրորդ փուլում հատկապես կարևոր է խոսել խնդիրների լոկուսի մասին. սովորաբար առանձնացնում են **սուբյեկտիվ լոկուս ու օբյեկտիվ լոկուս հասկացությունները:**

Սուբյեկտիվ լոկուսի մեջ մտնում են՝

- Երեխայի հետ խնդիրները
- Ընտանիքի հետ խնդիրները
- Ամուսնու հետ խնդիրները
- Ինքն իր հետ խնդիրները
- Երրորդ անձանց հետ խնդիրները /ընտանիքում չապրող տատիկներն ու պապիկները/:

Օբյեկտիվ լոկուսի մեջ մտնում են՝

- Հոգեսոմատիկ խնդիրներ
- Դերային վարք
- Անհատական առանձնահատկությունների հետ կապված
- Օբյեկտիվ իրադրության հետ /տան բացակայություն,կարոտ և այլն/

Խորհրդատուի անձի նկատմամբ ներկայացվող պահանջներ՝

- Հուզական ստաբիլություն ու օբյեկտիվություն
- Այլ մարդկանց իրավունքների նկատմամբ հարգանք
- Այլ մարդկանց արժանիքների ընդունում
- Մասնագիտական պարտքի գիտակցում
- Օբյեկտիվություն
- Էմպատիա
- Ճկունություն
- Լսելու ունակություն
- Առուտենտիկություն՝ առանձնացնում հիմնական 3 հատկանիշներ՝
- Ներկա պահի լրիվ գիտակցում
- Կյանքի միջոցի ընտրություն տվյալ պահի համար
- Իր ընտրության համար պատասխանատվության ընդունում

- Սեփական փորձին բացությունը
- Ինքնաճանաչման զարգացում
- անձնական պատասխանատվության ընդունում
- Մարդկանց հետ հարաբերությունների <խորաթափանցություն>
- Ռեալիստիկ նպատակադրում

Խորհրդատվական կոնտակտը ենթադրում է՝

- *անվերապահ հարգանք այցելուի նկատմամբ*
- *էմպաթիայի ապրում. ընդունել այցելուի տեսակետը եվ հասկացնել նրան , որ ընդունում ենք:*

Խորհրդատուի համար հիմնական պահանջներն ու վտանգները՝

Հաճախ/հատկապես սկզբնական շրջանում/ ունենում ենք ամբիվալենտ զգացումներ,բայց դրանք չպետք է խանգարեն խորհրդատվական գործընթացին, քանի որ օրինակ՝ չափից դուրս տագնապը կարող է բերել ծայրահեղությունների.

- խորհրդատուն կարող է լրիվ մոռանալ մասնագիտական պահանջների մասին
- խորհրդատուն կարող է դուրս չգալ մասնագիտական դերի պահանջներից

Գոյություն ունեն խորհրդատուներին բնորոշ ձգտումներ՝

- Ես միշտ պետք է օգնեմ
- Ես պետք է սիրեմ իմ բոլոր այցելուներին
- Ես պետք է հասկանամ ու մաքսիմալ էմպաթիա ցուցաբերեմ
- Ես պարտավոր եմ ընդունել այլ մարդու եվ դա հնարավոր կլինի, եթե ես հրաժարվեմ ինքս ինձնից
- Ես պետք է պատասխանեմ այցելուի ցանկացած հարցին
- Խորհուրդ չտալու խնդիրը /Մի՛ գնահատեք ու սովորե՛ցրեք/
- Գնահատե՛ք խորհրդատվության արդյունքները

Կոնսուլտատիվ կոնտակտի որակը կախված է 2 կարեվոր գործոններից՝ թերապեվտիկ միջավայր ու խորհրդատուի հմտություններ:

Թերապեվտիկ միջավայրը իր հերթին մի քանի կոմպոնենտ է ներառում՝

- ֆիզիկական՝խորհրդատվական տեղի կահավորումը, այցելուի ու խորհրդատուի դիրքերը տարածությունում /հեռավորություն, նստելաձև/
- հուզական բաղադրիչներին է վերաբերում՝փոխադարձ վստահության միջավայրի ստեղծում, խորհրդատուի անկեղծություն, անվերապահ հարգանքը այցելուի նկատմամբ:

Ֆիզիկական բաղադրիչ՝

Խորհրդատվական սենյակի կառուցում՝

- չափեր
- գունավորում
- կահավորում
- անձնական իրերի առկայություն
- տեղիանփոփոխություն
- առանձնացվածություն
- խորհրդատվության ժամանակի կառուցում

Հուզական բաղադրիչ

- Անկեղծ հետաքրքրություն մարդկանց հանդեպ եվ իրական ցանկություն օգնելու նրանց
- Խորհրդատվության ընթացքում պետք է ողջ ժամանակը այցելուին տրամադրել,չի կարելի այլ գործերով զբաղվել
- Պետք է հնարավորություն տրվի այցելուին առավելագույնս արտահայտվելու
- Անկեղծություն՝ կոնգրուէնտությունը միջանձնային հարաբերություններում

SOLER՝ 5 հիմնական պայմաններ կոնտակտի պահպանման համար՝

- Այցելուի հետ աչքը աչքին լինել/squarely/
- Բաց դիրքում լինել/open posture/
- Ժամանակ առ ժամանակ դեպի այցելուն մոտենալ/lean/
- Պահել աչքերի կոնտակտը/eye contact/
- Լինել թուլացած /relaxed/

Մաս 3. Խորհրդատվության առանձնահատկությունները բռնության ենթարկված անձանց հետ՝

Կախված կոնկրետ նպատակից՝ առանձնացնում են բռնության զոհերի խորհրդատվության 3 հիմնական նպատակներ՝ **տեղեկատվական և կողմնորոշող, անձնային աջակցող և անձնային փոփոխող:**

- Տեղեկատվական եվ կողմնորոշող խորհրդատվությունը ուղղված է անհրաժեշտ հոգեբանական տեղեկատվության ստացմանը ըստ այցելուի խնդրի, ինչպես նաեվ օգնության ցուցաբերմանը բռնության հաղթահարման համար
- անձնային աջակցող խորհրդատվություն, որի հիմնական նպատակը անձի հաստատունության ու պաշտպանության հաստատումն է
- անձնային-փոփոխվող խորհրդատվության հիմնական նպատակը անձի հարմոնիզացիան է՝ ներքին կոնֆլիկտների գիտակցման ու վերամշակման միջոցով:

Խորհրդատվության առանձնահատկությունները տագնապային ու վախերով այցելուների դեպքում՝

Տագնապի հիմնական առանձնահատկությունը կերպարանափոխումն է, որի առավել հաճախ հանդիպող ձևերից է՝

- Անվանափոխումը
- Դիմակավորումը գործողություններով
- Հոգեսոմատիկ գանգատները
- Չափազանց ցուցադրական բացությունը

Վախի հիմնական առաձնահատկությունը կոնկրետ օբյեկտ ունենալն է կամ իրադրությունն է:

Խորհրդատվության առանձնահատկությունները մեղքի զգացումով ու պսիխոսոմատիկ այցելուների դեպքում.

Տարբերում են.

- իրական
- նևրոտիկ
- էքզիստենցիալ մեղքի զգացման տեսակներ

Պսիխոսոմատիկ այցելուների հիմնական առանձնահատկություններից է ալեկսիտիմիան՝ հույզերը արտահայտելու հետ կապված խնդիրներ:

Դեպրեսիվ ու սուիցիդալ մտքերով այցելուներ՝

- Ինքնաոչնչացման միտում
- Ինքն իրենով <զբաղվածություն>
- Այլ մարդկանց կարծիքներից կախվածություն
- Որոշակի զայրույթ, որի չարտահայտումը բերում է ինքնամեղադրանքի, հետևաբար անվերջ ոլորաշրջանի:

ՊԵՐԵՆՈՍ-ԿՈՆՏՐՊԵՐԵՆՈՍ: Պերենոսը ոչ ադեկվատ ու պերսեվերատիվ զգամունքների, հակումների, ֆանտազիաների, դիրքորոշումների ապրումն է և պաշտպանական մեխանիզմերի ակտիվացումը՝ առաջացած նախկին հարաբերություններից կարևոր մարդկանց հետ:

Խորհրդատվությունում պերենոսին բնորոշ է՝

- Պերենոսը սխալ է այն իմաստով, որ այցելուն պատկերացնում է խորհրդատուին այլ լուսյսի տակ՝ տալիս է գծեր, հատկություններ, որ այլ մարդկանց է բնորոշ այլ իրադարձություններում ու երբեմն ժամանակին:
- Պերենոսը կարող է լինել դրական ու բացասական՝ դրական պերենոսը հիմնված է այցելուի իդեալականացման վրա
- Պերենոսը անգիտակցական գործընթաց է:

Պերենոսի տրանսֆորմացիան խորհրդատվական գործընթացում նման է երեխայի հուզական զարգացմանը.երեխան աստիճանաբար ծնողների,որպես ամնեակարող ու ամնեագետի կարծիքը դեպի ավելի իրական է անցնում,գնահատելով նրանց որպես հարաբերականորեն հասարակ մարդ.

այդպիսով այցելուն սկսում է գնահատել խորհրդատուին իրական. դրական պերենոսին միշտ բնորոշ է որոշակի, հաճախ ժամանակավոր իդեալիզացիան խորհրդատուի էրոտիկ գունավորմամբ այցելուի հետերոսեքսուալության պայմաններում:

Կոնտրպերենոսը ենթադրում է այնպիսի թեմաները, որոնք կպնում են խորհրդատուին: Կարելի է առանձնացնել տոտալ՝բոլոր հուզական ռեակցիաները խորհրդատուի այցելուի նկատմամբ ու դասական՝պատասխան ռեակցիան պերենոսին:

Առավել հաճախ հանդիպում են՝

- Խորհրդատուի ցանկությունը դուր գալ այցելուին, ընդունված լինել ու գնահատված լինել
- Խորհրդատուի վախը, որ կարող է այցելուն իր մասին վատ մտածել
- Էրոտիկ ու սեռական զգացմունքները այցելուի նկատմամբ
- Ձգտում զբաղեցնել մարգարեական դիրք ու տալ այցելուին խորհրուրդներ
- Բուռն ռեակցիաներ այն այցելուների խնդիրներին, որոնք պայմանավորում են ներքին կոնֆլիկտ:

Դիստանտային խորհրդատվություն՝

- ԳՐԱՎՈՐ
- ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ

Պիտեր ՈՒ.ՈՒոստը և Չադ Վերը 1953թ. իրենց ծառայողական հեռախոսահամարները հայտարարեցին, որպեսզի միայնակ, մոլորված կամ սուիցիդալ մտադրություններ ունեցող անձիք կարողանային օգնության դիմել, ապա նրանք չէին կարող ենթադրել, որ շղթայական ռեակցիան մեծ մասաներ կընդգրկեր:

Հեռախոսային խորհրդատվությունը ունի մի շարք առանձնահատկություններ

- Հեռախոսային հաղորդակցման ժամանակ այցելուի մոտ ձևավորվում է խորհրդատուի երևակայական կերպարը, որին նպաստում է անոնիմության սկզբունքը /խորհրդատուի, այցելուի/: Այցելուն անգիտակցորեն ձևավորում է

այն, ինչ առավել պահանջելի է ինչպես դրական, այնպես էլ բացասական պերենոսի համար, տալիս է խորհրդատուին ինչպես անհրաժեշտ արտաքին տեսք, այնպես էլ անձնային որակներ՝ այդպիսով ստեղծելով համապատասխան միֆ:

- Որպես այդպիսին տեսողական տեղեկատվության բացակայությունը ծանրաբեռնում է լսողական աղբյուրը, ուստի մեծ նշանակություն է տրվում ինչպես հաղորդագրության տեքստին, այնպես էլ այնպիսի մանրուքների, ինչպիսիք են մարդկային ձայնը, տոնը, տեմբրը, խոսքի արագությունը, դադարներն ու լռության տևողությունը:

Կարող են լինել հեռախոսային զանգերի հետևյալ դեպքերը՝

♪ Լռող զանգեր՝ զանգում է բաժանորդ, որի վճռականությունը չի բավականացնում խոսակցությունը սկսել ու համար: Նման դեպքերում խորհրդատուն կարող է ասել. <<Խոսացե՛ք, խնդրում եմ. ես պատրաստ եմ լսել Ձեզ>>, <<Ես հասկանում եմ, երբեմն դժվար է լինում սկսել խոսակցությունը>> և այլն:

♪ Դիմակավորված դիմում՝ օրինակ <<Սա տաքսիի համար է>>, <<Իսկ որտեղ եմ ես ընկել>>, <<Իսկ ինչ թեժ գիծ է Ձերը>>, <<Իսկ կարող եմ ես Ձեզ վստահել>> և այլն:

♪ Կատակներ, հումորներ. Լսելով հեռախոսով հումորներ կարելի է պատասխանել հումորով. Օրինակ՝ <<Այդքանը, էլ ինչ կուզենայիք ասել>>: Ցույց տալով, որ ամեն դեպքում պատրաստ եք ընդունել այցելուի վարքը:

♪ ՍԵռական բնույթի զանգեր. գոյություն ունեն տարբերություններ մարդկանց միջև, որոնք ունեն սեռական խնդիրներ, որի համար օգնություն են փնտրում, և մոնիպուլյացիայի ենթարկող մարդիկ /ամենից շատ տղամարդիկ/, որոնք սեռական բավարարություն են ստանում հեռախոսային խորհրդատուների հետ /սովորաբար կին/ ինչ-որ ինտիմ հարաբերությունների վերաբերյալ ստեղծվող ֆանտազիաներից:

Առավել էֆֆեկտիվ ձևը բռնության տարած անձանց հետ աշխատանքի խմբային աշխատանքն է: Խմբային թերապևտիկ տեխնոլոգիաները կանանց համար ուղղված են խմբային աջակցմանն ու անձնային դրական ռեսուրսների դուրս բերմանը:

Մաս 4. Խմբային խորհրդատվություն:

Խմբային խորհրդատվությունը ուղղված է խմբային աջակցման միջոցով հոգեբանական օգնության ցուցաբերմանն ու անձնային ռեսուրսների դուրս բերմանը:

Հիմնական խնդիրները հանդիսանում են մեղքի, վախի, զայրույթի զգացման հետ աշխատանքը, ինքնագնահատականի բարձրացումը ու ռեսուրսների դուրս բերումը:

Խմբային աշխատանքի ժամանակ քննարկվում են հետևյալ հիմնական թեմաները՝

- ինքնապաշտպանություն-գործողություններիպլան
- ինքնագնահատական
- մարդկանց միջև փոխհարաբերություն

Կանանց, որոնք բռնության են ենթարկվել, խմբային աշխատանքը հնարավորություն է տալիս՝

- Դուրս գալ փակ տարածության սահմաններից
- Տեսնել, որ այդպիսի խնդիր ունեն նաև այլոք
- Հասկանալ, որ շատ խնդիրներ տղամարդու և կնոջ միջև հանդիսանում են մշակութային դիրքորոշումների ու համոզմունքների արդյունք
- Գիտակցել իրենց հնարավորությունները սեփական խնդիրները լուծելու հարցում ու պատասխանատվություն վերցնել սեփական կյանքի համար:

Խումբը պիտի կնքի խմբային պայմանագիր ու քննարկի խմբային պայմանագրի պայմանները՝ <<կոնֆիդենցիալություն>>, <<անկեղծություն>>, <<խոսելու իրավունք>>, <<stop>>-եր և այլն:

Խմբային հավաքը կազմակերպվում է ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ . նախընտրելի է շաբաթական 2 հանդիպում՝ 1-2 ժամ տևողությամբ:

Մաս 5. Խորհրդատվության հիմնական տեխնիկաները՝

ՀԱՆԳՍՏԱՑՈՒՄ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ: Այս տեխնիկաները կարևոր են խորհրդատվական կոնտակտի ամրապնդման ու ստեղծման համար: Ընդունումը կարելի է ցույց տալ կարճ արտահայտություններով. <<Այո հասկանում եմ>>,

<<Լավ>>, <<Այո>>, <<Ահա>>, այսինքն, այնպիսի մասնիկներ, որ ձևակերպվի այսպես. <<Շարունակեք, ես Ձեզ հետ եմ, ես ուշադիր լսում եմ>>:

Հանգստացում: <<ժամանակ առ ժամանակ բոլորն էլ իրենց այդպես են զգում>>, <<Դա հեշտ չի լինի>>, <<Ես վստահ չեմ, բայց կարող եք փորձել>>:

ՊԱՐԱՖՐԱԶ ԵՎ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄ: Նշում են պարաֆրազի 3 հիմնական նպատակներ՝

- Ցույց տալ այցելուին, որ խորհրդատուն շատ ուշադիր լսում է իրեն
- Կրիստալիզացնել այցելուի միտքը՝ կրկնելով իր բառերը կարճ տեսքով
- Ստուգել այցելուի մտքերի հասկացման ճշտությունը:

Պետք է հաշվի առնել 3 հիմնական կանոններ՝

- Այցելուի հիմնական միտքն է պարաֆրազի ենթարկվում
- Չի կարելի խեղաթյուրել կամ փոխել այցելուի դատողությունների իմաստը ու նոր բաներ ավելացնել
- Խուսափել կրկնօրինակումից, բառացի չկրկնել այցելուի արտահայտությունները. <<Ես Ձեզ այսպես հասկացա>>, <<Եթե ես ձեզ ճիշտ հասկացա>>, <<Դուք կարող եք ուղղել ինձ, եթե ես սխալվեմ, ես հասկացա, որ…>>:

Ընդհանրացումը թույլ է տալիս մի քանի մտքեր կապել իրար հետ:

ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄ: Հույզերի արտացոլումը ենթադրում է դրանց ճանաչում: Դրա համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոչ միայն անձի պատմության բովանդակությանը, այլ նաև նրա հուզական տոնին, դիրքին, դեմքի արտացոլմանը.
արտացոլելով զգացմունքները,պետք է հաշվի առնել բոլոր հուզական ռեակցիաները՝ դրական,բացասական,ամբիվալենտ՝ ուղղված ինքն իր նկատմամբ, այլ մարդկանց ու խորհրդատուի նկատմամբ:

Հիմնական սկզբունքները՝

- Պարտադիր չէ արտացոլել կամ մեկնաբանել այցելուի յուրաքանչյուր զգացմունքը՝ յուրաքանչյուր գործողություն պետք է նպատակահարմար լինի կոնտեքստին:
- Պարտադիր է ուշադրություն դարձնել զգացմունքներին, երբ նրանք առաջացնում են խորհրդատվության համար խնդիրներ ու կարող են այցելուին օգնել:
- Խորհրդատուն պետք է արտացոլի նաև այցելուի զգացմունքները. հիմնական արտահայտությունները՝ <<Ինձ թվում է, որ ԴՈՒՔ…զգում>>, <<Ձեք զգում Ձեզ մի քիչ ….>>, <<Դուք հիասթափված եք Ձեզ զգում>>:

Լռության դադարները նպաստում են՝

- Խորհրդատուի ու այցելուի հուզական փոխհասկացմանը
- Թույլ է տալիս այցելուին ընկղմվել ինքն իր մեջ և ուսումնասիրել իր զգացմունքները, դիրքորոշումները, արժեքները
- Այցելուին թույլ է տալիս հասկանալ, որ զրույցի համար պատասխանատվությունը իր վրա է:

Եթե լռությունը սուբյեկտիվորեն տհաճ է երկու կողմերի համար, ուրեմն հարաբերությունները փակուղի են մտել ու անհրաժեշտ է ելքեր փնտրել: Երբեմն լռությունը դիմադրություն է նշանակում: Եթե լռությունը երկար է տևում, անհրաժեշտ է օգնել այցելուին խոսել. <<Ձեիք ուզենա կիսվել ինձ հետ այն մասին, թե ինչ եք հիմա զգում>>, <<Ինչ կարևոր բան եք Ձեր համար լսում լռության մեջ>>:

Ինֆորմացիա տալը: Խորհրդատուն ասում է իր կարծիքները, պատասխանում է հարցերին ու տեղեկատվություն տալիս տարբեր ասպեկտների մասին: Տեղեկատվությունը սովորաբար կապված է խարհրդատվական գործընթացի, խորհրդատուի վարքի կամ խորհրդատվության պայմանների հետ: Այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են, <<Կարող ենք մենք երեխաներ ունենալ>>, <Ժառանգական է արդյոք ուռուցքը, թե ոչ>. այս տեսակի հարցերին կարևոր է պատասխանել առանց ծիծաղի, հեգնանքի, որը մեծացնում է տագնապը:

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ: Առանձնացնում են մեկնաբանման 5 տիպ՝

- Կապերի հաստատում առանձնացված դատողությունների միջև՝ հասարակական ելույթ /ցածր ինքնագնահատական/շփման խնդիրներ
- Վարքի կամ զգացմունքների առանձնահատկությունների ակցենտացում՝ <<Դուք կարծես ուրախանում եք հնարավորությունների առաջացմամբ,սակայն,երբ բախվում եք դժվարությունների հետ,փախչում եք>>
- Հոգեբանական պաշտպանությունների, դիմադրության ռեակցիաների ու պերենոսի համար. օրինակ՝<<Ելնելով մեր զրույցից՝փախուստը Ձեր համար պայքարի միջոց է անհաջողության վախի դեմ>>
- Այժմեական իրադարձությունների,մտքերի,ապրումների կապում անցյալի հետ
- Մեկ այլ հնարավորություն է տրվում այցելուին հասկանալ իր զգացմունքները,վարքը կամ խնդիրները

ԿՈՆՖՐՈՆՏԱՑԻԱ: Կոնֆրոնտացիան խորհրդատուի ցանկացած ռեակցան է, որը հակասում է այցելուի վարքին: Առանձնացնում են կոնֆրոնտացիայի 3 հիմնական դեպք՝

1.Կոնֆրոնտացիան նպատակ ունի այցելուի ուշադրությունը ուղղել, դարձնել իր վարքի հակասություններին, մտքերին, զգացմունքներին կամ մտքերի ու զգացմունքների, մտադրությունների ու վարքի միջև:

2.Կոնֆրոնտացիան նպատակ ունի օգնել իրադրությանը այնպիսին, ինչպիսին այն կա՝ անկախ այցելուի՝ կոնտեքստի մասին պատկերցումներից ու իր պահանջմունքներից:

3.Կոնֆրոնտացիան նպատակ ունի այցելուի ուշադրությունը դարձնել իր <<փախուստներին>> որոշ խնդիրների քննարկման համար:

Կոնֆրոնտացիայի հիմնական սահմանափակումները՝

- Չի կարելի օգտագործել որպես պատիժ անընդունելի վարքի համար. թշնամանքի արտահայտման միջոց:

- Նախատեսված չէ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ջարդման համար. Այն օգնում է այցելուներին ճանաչել այն միջոցները, որոնցով պաշտպանվում է անհատը /իրականությունը գիտակցելու փախուստով/:

- Կոնֆրոնտացիան չի կարելի օգտագործել այցելուի ինքնաարտահայտման համար:

- Կոնֆրոնտացիան չպետք է լինի ագրեսիվ ու կատեգորիկ. ցանկալի է հաճախ օգտագործել <<ինձ թվում է>>, <<եթե ես չեմ սխալվում>> արտահայտությունները, որոնք արտահայտում են որոշակի կասկածանք ու թուլացնում կոնֆրոնտացիայի տոնը:

Մաս 6. Խորհրդատվության էթիկական սկզբունքները: Էթիկական սկզբունքներին ամբողջովին հետևել հաճախ շատ դժվար է՝

- Դժվար է հետևել ստանդարտներին խորհրդատվական իրադրության մեծ բազմազանության մեջ, քանի որ յուրաքանչյուր խորհրդատվական կոնտակտ ունիկալ է
- Շատ խորհրդատուներ գործում են որոշակի հաստատություններում /կլինիկա, կենտրոններ, դպրոցներ և այլն/. այդ կազմակերպությունների արժեքային կողմնորոշումը կարող է չհամընկնել խորհրդատուի պահանջների հետ
- Խորհրդատուն հաճախ ընկնում է այնպիսի հակասական իրադրությունների մեջ, երբ մի նորմային հետևելու համար պետք է խախտվի մյուսը:

Էթիկական սկզբունքներին սկսում ենք հետևել հենց առաջին հանդիպումից՝ գործընթացի մասին տեղեկատվություն տալով:

Խորհրդատվության հիմնական նպատակները՝

- Կոմպետենտության խնդիրը
- Կոնֆիդնեցիալության սահմանները
- Վիճակի ժամանակավոր վատթարացման ռիսկը
- Խորհրդատվության պայմանները՝ աուդիո-վիդեո ձայնագրությունների առկայություն՝ կապված է կոնֆիդենցիալության հետ:

Առանձնացնում են կոնֆիդենցիալության 2 մակարդակ՝

- Առաջին մակարդակը վերաբերում է այցելուների տվյալների մասնագիտական օգտագործմանը: Յուրաքանչյուր խորհրդատուի պարտականությունն է օգտագործել տեղեկատվությունը միայն մասնագիտական նպատակներով,և ոչ մի այլ մտադրությունով, և այցելուի մասին տվյալները /նշումները,անհատական քարտերը/պետք է պահպանվեն անհասանելի տեղերում:
- Երկրորդ մակարդակը վերաբերում է պայմաններին, որոնց դեպքում կարող է օգտագործվել խորհրդատվության ընթացքում ստացված տեղեկատվությունը,երբ անհրաժեշտ է <կիսվել> տվյալներով ծնողների,ուսուցիչների, ամուսինների հետ. մտադրության մասին պարտավոր ենք այցելուին տեղեկացնել, եթե այցելուն համաձայնվում է, ուստի հարց է բարձրանում կոնֆիդենցիալության սահմանների մասին:

Առանձնացնում են 7 հիմնական կանոններ, որոնց միջոցով կարելի է գծել կոնֆիդենցիալության սահմանները: Կոնֆիդենցիալությունը պարտադիր է, բայց դա բացարձակ չէ, հարաբերական է, քանի որ կան որոշակի պայմաններ, որոնք այդ պարտադրությունը փոխում են

- այցելուների կամ այլ անձանց համար բարձր ռիսկ
- հանցագործ գործողություններ
- այցելուների հոսպիտալիզացիայի անհրաժեշտությու
- այցելուի մասնակցությունը թմրանյութերի տարածման մեջ:

Կոնֆիդենցիալությունը կախված է այցելուի կողմից ներկայացված տվյալների բնույթից. այսպես թե այնպես այցելուի վստահությունը ավելի խստորեն կապում է խորհրդատուին, քան իրադարձությունների <<գաղտնիությունը>>, որ այցելուն է հաղորդում:

Խորհրդատվական հանդիպումների նյութերը, որոնք չեն կարող վնաս հասցնել այցելուին, չեն ընկնում կոնֆիդենցիալության կանոնի տակ:

Խորհրդատվական հանդիպումների նյութերը, որոնք անհրաժեշտ են խորհրդատուի էֆֆեկտիվ աշխատանքի համար ևս չեն մտնում կոնֆիդենցիալության կանոնի տակ:

Կոնֆիդենցիալությունը միշտ հիմնվում է այցելուի իրավունքի վրա՝ լավ անուն ու գաղտնիքի պահում՝ խորհրդատուն պարտավոր է հարգել այցելուի իրավունքը և որոշակի դեպքերում հակաօրինական լինել /օրինակ՝ այցելուի մասին տեղեկատվությունը չտալ իրավապաշտպան մարմիններին, եթե դրանով երրորդ անձի իրավունք չի խախտվում/:

Կոնֆիդենցիալությունը սահմանափակվում է խորհրդատուի սեփական արժանապատվությունը ու անվտանգությունը պահելու իրավունքով:

Կոնֆիդենցիալությունը սահմանափակվում է երրորդ անձանց և հասարակության իրավունքներով:

Հաջորդ կարևոր էթիկական սկզբունքը՝

- երկրորդական հարաբերությունների արգելումն է. խորհրդատուի հարազատների, ընկերների, ուսանողների հետ խորհրդատվության աննպատակահարմարությունը հասկանալի է, քանի որ խորհրդատվությունը տալիս է մասնագետներին գերակայող դիրք, որը կարող է էքսպլուատացիայի բերել:
- Սեռական հարաբերությունների խնդիրը կարևոր է ոչ միայն էթիկայի տեսանկյունից, այլ նաև մասնագիտական /դերի չարաշահման վառ ցուցանիշ/:
- Սեռական կոնտակտի դեպքում այցելուի մոտ ծայրահեղ կախվածություն է դիտվում, իսկ խորհրդատուն կորցնում է օբյեկտիվությունը:

Հեռախոսային խորհրդատվության հիմնական էթիկական սկզբունքները.

- Մշտական հասանելիություն՝ 24 ժամ կամ կախված նրանից , որքան ժամ եք պայմանավորվել, օրինակ՝10.00-19.00
- Անոնիմություն ու կոնֆիդենցիալություն՝ իրավունք ունի անուն չասելու, իսկ խորհրդատվության բովանդակությունը պետք է կոնֆիդենցիալ մնա

- Զանգողի նկատմամբ հարգանք՝այցելուն ընդունվում է այնպիսին,ինչպիսին կա:Խորհրդատուն իրավունք չունի զանգողին մանիպուլյացիայի ենթարկելու կամ իր դիրքը թելադրելու
- Զանգողի պաշտպանություն՝խորհրդատու կարող է լինել մարդ, ով անցել է համապատասխան վերապատրաստում, ով մշտապես կատարելագործում է մասնագիտական հմտություններն ու կարողությունները

Մաս 7. Սուպերվիզիա: Թարգմանաբար supervision նշանակում է հսկողություն, բայց Գ.Հեմլին նշում է, որ իրականում սուպերվիզիան դա <<ինչ-որ մեկի աշխատանքի հետևումը կամ դիտումն է>>: Սուպերվիզիան ուղղված է ինչպես խորհրդատուի անձնային որակների լավացմանը, այնպես էլ խորհրդատվական կարողությունների զարգացմանը :

Արևմտյան գրականությունում նկարագրվում է սուպերվիզիայի հետևյալ խնդիրները՝

- Էթիկական չափանիշների հետևում
- Մասնագիտական աճի նպաստում
- Մասնագիտական նույնականցման աճ

Որպես գործընթացային գնահատման /վերահսկման/ միջոց սուպերվիզիայում օգտագործվում են ներկայացումներ /գրառումներ/ և դեպքերի ներկայացում, դերային խաղեր, անմիջական դիտում,աուդիոձայնագրում:

Սուպերվիզիան թույլ է տալիս՝

- կիսվել զգացմունքներով
- խուսափել հետագա սխալներից
- դուրս բերել դժվարությունները, որոնք առաջացել են այցելուի հետ աշխատանքում
- դուրս բերել ու մեկնաբանել առաջացած դժվարությունների պատճառները
- լայնացնել տեսական ու պրակտիկ պատկերացումները
- հետագա աշխատանքների պլանավորում

Սուպերվիզիան կարող է լինել՝ անհատական կամ խմբային:

Սուպերվիզիայի հիմնական 3 գործառույթները՝

- Ուսումնական /ձևավորող/՝ թերապևտի հմտությունների, կարողությունների ու ընդունակությունների զարգացում
- Աջակցող՝ ուղղված այցելուի խնդիրների ազդեցության հակադրմանը
- Ուղղորդող՝ թերապևտի վերահսկողությունը ինքն իր անձի նկատմամբ /թերի ու խոցելի կողմեր/:

Սուպերվիզիայի հիմնական տեսակները՝

- Մեկը մեկին՝նախորոք պլանավորված հանդիպում օրվա քննարկմամբ՝ որպեսզի քննարկվի ու գնահատվի աշխատանքը
- Խմբային սուպերվիզիա՝ աշխատակիցների խումբը քննարկում և գնահատում է միմյանց աշխատանքը, մասնակիցները բարձրացնում են հարցեր քննարկման համար,իսկ խումբը քննարկում է յուրաքանչյուր դեպքն ու դեպքի լուծումները
- Ոչ ֆորմալ սուպերվիզիա՝չպլանավորված հանդիպում կամ դեմ դիմաց, կամ հեռախոսով
- Ճգնաժամային սուպերվիզիա՝չնախատեսված դեպքի քննարկում,որն ըստ աշխատակիցների բերել է ճգնաժամի.իրականանում էայցելուի աշխատանքից անմիջապես հետո:

Սուպերվիզիայի իրականցման հիմնական չափանիշները՝

- Անպայման պետք է դերերը հստակ քննարկվեն՝ ով է սուպերվիզորը /պետք է սուպերվիզիոն խմբի բոլոր անդամները ընտրեն/:
- Պետք է ժամանակային սահմանները որոշվեն՝խումբը ամիսը, թե շաբաթը մեկ անգամ է, քննարկում են զույգով ու հետո բերում խումբ, թե բերում խումբ:
- Խումբը պիտի քննարկի խմբային պայմանագրի պայմանները՝ <<կոնֆիդենցիալություն>>, <<անկեղծություն>>, <<խոսելու իրավունք>> և այլն:

Գլուխ IV: ՀՀ Օրենսդրություն:

Մարդու իրավունքների պաշտպանության բոլոր միջոցառումներում առանձնահատուկ ուշադրության է արժանանում կանանց իրավունքների պաշտպանությունը:

- Խնդրի կարգավորման նպատակով ՄԱԿ-ը և Եվրոպայի խորհուրդը ընդունել են համապատասխան իրավական ակտեր:
- Այդ առումով նախ հարկ է անդրադառնալ <Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին> ՄԱԿ-ի կոնվենցիային և համապատասխան կոմիտեի հանձնարարականներին:
- Կոմիտեի թիվ 13 Ընդհանուր հանձնարարականի 1-ին հոդվածով կանանց նկատմամբ բռնությունը սահմանվում է որպես խտրականություն կանանց նկատմամբ:
- Գենդերային պատկանելության հիմքով բռնության դեմ պայքարելու համար պետություններին կոչ է արվում ընդունել համապատասխան օրենսդրություն, ներառյալ պատժամիջոցները, քաղաքացիական պատասխանատվությունը և փոխհատուցողական դրույթները, ինչպես նաև տուժած կանանց համար ապահովել պատշաճ պաշտպանություն և աջակցություն, այդ թվում ապաստարանների տրամադրում, խորհրդատվություն և վերականգնողական աշխատանքներ:
- Կոմիտեի թիվ 19 Ընդհանուր հանձնարարականը, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային միացող երկրներին առաջադրվում են մի շարք պահանջներ:
- Բռնության մասշտաբների, պատճառների և հետևանքների, ինչպես նաև նրա կանխարգելմանն ու դադարեցմանն ուղղված արդյունավետ միջոցների վերաբերյալ տեղեկությունների հավաքում:
- Կանանց և աղջիկներին գենդերային բռնությունից պաշտպանելու համար անհրաժեշտ բոլոր իրավական և ուրիշ միջոցների ձեռնարկում:
- Կանանց առևտրի և մարմնավաճառության բոլոր ձևերի խափանում:
- Քարոզչական արշավների անցկացում՝ ուղղված կանանց նկատմամբ բռնությանը նպաստող արմատացած վերաբերմունքի, կարծրատիպերի և նախապաշարումների հաղթահարմանը:
- ՄԱԿ-ի համակարգում խնդրո առարկայի տեսանկյունից բեկումնային է հատկապես 1993 թվականը, երբ Վիեննայի հռչակագրում և գործողությունների

ծրագրում հատուկ դրույթ ընդգրկվեց կանանց նկատմամբ բռնությունների հարցերին, իսկ Գլխավոր ասամբլեան, քննարկելով այդ հիմնախնդիրը, ընդունեց Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին հռչակագիրը:

- ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին հռչակագրի 1-ին հոդվածում կանանց նկատմամբ բռնության երևույթը սահմանվել է որպես. <<սեռական հատկանիշով կատարվող բռնության ամեն մի գործողություն, որը ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք է պատճառում կամ կարող է պատճառել կանանց, ինչպես նաև այդպիսի գործողությունների սպառնալիքներ, հարկադրանք կամ կամայական զրկում ազատությունից, լինի դա հասարակական թե անձնական կյանքում>>:

Հարկ է նշել նաև **ԵԽ Նախարարների կոմիտեի** մի շարք հանձնարարականները անդամ պետություններին՝

- <<Երեխաների ու երիտասարդ չափահասների սեռական շահագործման, պոռնկագրության ու մարմնավաճառության և թրաֆիքինգի մասին>>, Rec/91/11.
- <<Սեռական շահագործման նպատակով իրականացվող մարդկանց շահագործման (թրաֆիքինգ) դեմ պայքարին ուղղված միջոցների մասին>>,Rec./2000/11.
- <<Երեխաներին սեռական շահագործումից պաշտպանելու մասին>>Rec./2001/1.
- <<Կանանց բռնությունից պաշտպանելու մասին>>Rec./2002/5.

ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականները ուղեցույց են ծառայում այն երկրների համար, որոնք ցանկանում են շոշափելի հաջողությունների հասնել բռնության կանխարգելման գործում:

2011թ. ապրիլի 7-ին Եվրոպայի Խորհուրդն ընդունել է **<<Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին>> կոնվենցիան** (այս փաստաթղթին Հայաստանի Հանրապետությունը դեռ չի միացել), որի նպատակն է կանանց պաշտպանությունը բռնությունից, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը, քրեական հետապնդումը և վերացումը:

Հայաստանի Հանրապետությունը հիմնականում վավերացրել է մարդու իրավունքների ոլորտում գործող գրեթե բոլոր միջազգային դաշնագրերը

Հայաստանի Հանրապետությունը Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպայի խորհրդի անդամ է:

Ուստի միջազգային իրավունքի և մարդու իրավունքների ոլորտում գործող դաշնագրերի համաձայն՝ պետությունը պարտավոր է պատշաճ կերպով կանխարգելել, հետաքննել և պատժել գենդերային բռնությունը, անկախ այն հանգամանքից՝ նման բռնարարքները կատարվել են պետության, թե մասնավոր անձանց կողմից:

Պետությունը պարտավոր է նախաձեռնել բոլոր անհրաժեշտ իրավական և այլ միջոցները կանանց ամեն տեսակի բռնություններից պաշտպանելու համար, անկախ այն հանգամանքից, թե դա տեղի է ունենում տանը, աշխատավայրում, համայնքում, հասարակության մեջ, ցանկացած իրադրությունում, ինչպես նաև զինված հակամարտությունների ժամանակ:

Ելնելով ՀՀ միջազգային պարտավորությունից, ինչպես նաև կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ամրագրման սկզբունքից, անկախացումից հետո հանրապետությունում իրականացվել և իրականացվում են օրենսդրական դաշտի բարեփոխումներ:

Կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարությունն ամրագրված է նաև մի շարք օրենսգրքերով և օրենքներով.

- ՀՀ ընտանեկան օրենսգիրք (ընդունված ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2004 թվականի նոյեմբերի 9-ին.,
- ՀՀ աշխատանքային օրենսգիրք (ընդունված ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2004 թվականի նոյեմբերի 9-ին).
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունված ՀՀ Ազգային Ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին).
- ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2003թ. ապրիլի 18-ին).
- ՀՀ ընտրական օրենսգիրք (ընդունված ՀՀ Ազգային Ժողովի կողմից 1999թ.-ի փետրվարի 5-ին.
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունված ՀՀ Ազգային Ժողովի կողմից 1998թ. հուլիսի1-ին).
- Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք (ընդունված ՀՀ Ազգային Ժողովի կողմից 1985թ. դեկտեմբերի 6-ին).

- <<Աշխատանքի վարձատրության մասին>> ՀՀ օրենք (ընդունված է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2001 թվականին).
- <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենք (ընդունված է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2001 թվականի ապրիլի 12-ին).
- <<Աշխատանքի պետական տեսչության մասին>> ՀՀ օրենք (ընդունված է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2005 թվականին մարտի 24-ին).
- <<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենք (ընդունված է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2005 թվականի հոկտեմբերի 24-ին).
- <<Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին>> ՀՀ օրենք (ընդունված է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2005 թվականի հոկտեմբերի 24-ին).
- <<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> ՀՀ օրենք (ընդունված է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 1996 թվականի մարտի 4-ին).
- <<Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին>> ՀՀ օրենք (ընդունված է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2002 թվականի դեկտեմբերի 11-ին):

Երկրի հիմնական օրենքը՝ **ՀՀ Սահմանադրությունը** երաշխավորում է մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները բոլորի համար՝ համաձայն մարդու իրավունքների միջազգային իրավունքի սկզբունքների, և արգելում է խտրականությունը ցանկացած հիմքով, այդ թվում սեռի:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն մասնակիորեն համապատասխանում է միջազգային սկզբունքներին, որոնք պահանջում են օրենսդրության մշակում և կանանց նկատմամբ բռնության զոհերի պաշտպանություն, այդ թվում՝ փոխհատուցման և քաղաքացիական իրավունքի պաշտպանության միջոցների այլ արդյունավետ ձևերի տրամադրում:

Չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պատասխանատվություն չի նախատեսում գենդերային բռնության հիմքով, բայց ելնում է վնաս հասցնելու համար պատասխանատվության ընդհանուր հասկացությունից:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը սահմանում է ամուսնության, ամուսնությունը դադարելու և անվավեր ճանաչելու պայմաններն ու կարգը, կարգավորում է

անձնական ոչ գույքային և գույքային հարաբերություններն ընտանիքի անդամների միջև՝ ամուսինների, ծնողների և զավակների (որդեգրողների ու որդեգրվածների) և այլ անձանց միջև, ինչպես նաև որոշում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանիքում տեղավորելու ձևերն ու կարգը:

Ընտանեկան օրենսդրությունը ելնում է.

- ընտանիքի ամրապնդման,
- ընտանեկան հարաբերությունները փոխադարձ սիրո ու հարգանքի վրա կառուցելու,
- ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ օգնության և պատասխանատվության,
- ընտանեկան գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության,
- ընտանիքում երեխաների դաստիարակության առաջնայնության,
- ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների անարգել իրականացումն ապահովելու,
- այդ իրավունքների դատական պաշտպանության հնարավորությունների անհրաժեշտությունից:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը հիմնականում արտահայտում է Հայաստանի Հանրապետությունում հասարակական հարաբերությունների փոփոխությունը և բովանդակում է միջազգային չափորոշիչներին համապատասխան իրավանորմեր:

ՀՀ քրեական օրենսգիրքն ապահովում է օրենքի առջև կանանց և տղամարդկանց հավասարությունը՝ առանց խտրականության: Այն պատասխանատվություն է նախատեսում՝

- սպանության,
- անզգուշությամբ մահ պատճառելու,
- ինքնասպանության հասցնելու,
- ծեծի,
- անձի առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելու,
- խոշտանգման,
- բռնաբարության,

- սեքսուալ բնույթի բռնի գործողությունների,
- սեռական հարաբերության հարկադրելու,
- անձի հանդեպ սպանության, ծանր վնաս պատճառելու սպառնալիք կիրառելու և այլ հանցավոր արարքների համար:

Չնայած քրեական օրենսգիրքով նախատեսված են խտրականության վերացման և մարդու հավասար իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման սահմանադրական երաշխիքներ, սակայն ընդհանուր առմամբ, այն գենդերային տեսանկյունից չեզոք է:

Գործող քրեական օրենսգրքում գերակայում է բռնության դասակարգումն ըստ գործադրման եղանակի.

- ֆիզիկական բռնություն,
- հոգեկան բռնություն,
- սեռական բռնություն,
- ֆիզիկական, հոգեկան և սեռական բռնության գործադրման սպառնալիք:

Խտրականությունը քրեական հանցանք չի համարվում, մասնավորապես, ընտանեկան բռնությունը՝ որպես գենդերային բռնության ամենատարածված տեսակ, սահմանված չէ որպես հանցանք և կանանց համար գենդերային բռնությունից պատշաճ պաշտպանություն չի ապահովում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կանոնակարգվում է քրեական օրենսգրքով նախատեսված հանցավոր արարքներ կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարաբերությունները:

Քրեական պատիժ է սահմանված բռնությանն առնչվող մի շարք արարքների համար, և օրենսդրությունը իրավական և քաղաքացիական պաշտպանության միջոցներ է տրամադրում բռնության զոհերին:

Սակայն, գենդերային բռնության ոչ բոլոր ձևերն են քրեորեն հետապնդվում: **«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով** կանոնակարգվում են ոստիկանության իրավասությունները հանցավոր արարքների դեմ պայքարի իրականացման գործընթացում և այլն:

Օրենքով նախատեսված չեն միջամտության այնպիսի տեսակներ կամ ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան ընտանեկան բռնության կոնկրետ դրսևորման ժամանակ իրականացնել օպերատիվ միջամտություն բռնությունից տուժած անձի, նրա ընտանիքի անդամների պաշտպանությունն ապահովելու

առումով, հատկապես այն դեպքերում, երբ ընտանեկան բռնության կոնկրետ դրսևորումը հանցավոր բնույթ չի ունեցել:

<<Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին>> ՀՀ օրենքում ամրագրված են մարդու վերարտադրողականության հետ կապված իրավունքները՝

- յուրաքանչյուր ոք կարող է ինքնուրույն տնօրինել իր սեռական ու վերարտադրողական կյանքը,
- ընտանիք կազմել,
- ինքնուրույն որոշել իր երեխաների թիվն ու նրանց ծնվելու ժամկետները,
- պաշտպանված լինել ճնշման բոլոր ձևերից, այդ թվում՝ սեռական շահագործումից և բռնությունից, հարկադրական հղիությունից, աբորտից, ամլացումից և վերարտադրողականության իրավունքների այլ խախտումներից,
- ինքնուրույն որոշումներ կայացնել սեռական ու վերարտադրողական առողջության հետ կապված բժշկական միջամտություններ ստանալիս:

Օրենքով ամրագրված է նաև կնոջ բեղմնականխման միջոցների օգտագործման և հղիության արհեստական ընդհատման իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնախնդիրները կարգավորող մի շարք միջազգային-իրավական փաստաթղթեր:

Ոլորտը կարգավորող օրենսդրությունը հիմնականում նախատեսում է միջազգային չափորոշիչներին համահունչ իրավանորմեր:

Օրենսդրության համաձայն յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Աշխատանքի և զբաղվածության ոլորտում գենդերային հավասարության, խտրականության բացառման, բռնության տարրերի կանխարգելման բնագավառում ՀՀ-ի գործունեությունը հիմնված է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կոնվենցիաների ու հանձնարարականների, ՄԱԿ-ի մի շարք փաստաթղթերի, աղքատության հաղթահարման և կանանց ու տղամարդկանց հավասարությանը հասնելու մի շարք պարտավորությունների վրա:

Այդ փաստաթղթերը հիմնականում ընդունվել են Սոցիալական զարգացման համաշխարհային գագաթնաժողովում (Կոպենհագեն, 1995թ.), Կանանց դրությանը նվիրված 4-րդ համաշխարհային խորհրդաժողովում (Պեկին, 1995թ.)։

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը աշխատանքային հարաբերություններում արգելում է խտրականությունը, որևէ տեսակի հարկադիր աշխատանքը և աշխատակիցների հանդեպ բռնությունն ու սեռական հետապնդումները:

Այն երաշխավորում է արդար աշխատանքային պայմանների իրավունք յուրաքանչյուր աշխատողի համար, ինչպես նաև աշխատողների հավասար իրավունքներ և հնարավորություններ։

Համաձայն օրենսգրքի, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները խախտելը կամ սեռական հետապնդումները աշխատակիցների, ենթակաների կամ շահառուների նկատմամբ որակվում են որպես աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում:

Այդ խախտումների համար գործատուին իրավունք է վերապահված լուծել իրավունքը խախտողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Օրենսգրքում ներառված են նաև հոդվածներ, որոնք արգելում են հարկադիր աշխատանքը, բռնությունն աշխատողի նկատմամբ, մինչև 14 տարեկան երեխային աշխատանքային գործունեության մեջ ներգրավելը, ինչպես նաև հոդվածներ, որոնք ապահովում են գործատուի գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունը:

ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում բնակչության զբաղվածության, ինչպես նաև գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության հարցերը կարգավորվում են **<<Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքով:**

Այն նախատեսում է բնակչության զբաղվածության պետական քաղաքականության հիմնական սկզբունքները:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է <<սոցիալական աջակցություն>> հասկացությունը, դրա կազմակերպման և տրամադրման սկզբունքներն ու կարգը, ֆինանսավորման աղբյուրները, սոցիալական աջակցության կառավարման համակարգը:

Օրենքում սահմանված է <<կյանքի դժվարին իրավիճակ>> հասկացությունը, որը ենթադրում է՝

- հաշմանդամության,
- տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի,
- հիվանդության,
- առանց ծնողական խնամքի մնալու,
- աղքատության,
- երկարատև գործազրկության,
- ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության ենթարկվելու,
- անօգնականության,
- միայնակության,
- սոցիալական մեկուսացման,
- դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու,
- ազատազրկման վայրերից վերադառնալու հետևանքով մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող:

Օրենքում օգործածված է նաև **«բռնություն»** եզրույթը, որը սահմանվում է որպես անձի ֆիզիկական և/կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված արարք կամ դրա սպառնալիք:

Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, սոցիալական աջակցություն ստանալու իրավունք ունեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում կացության համապատասխան կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք:

Օրենքի 12-րդ հոդվածը նախատեսում է ժամանակավոր օթևանի տրամադրում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց՝

- կազմակերպություն ընդունված հաճախորդը ստանում է սոցիալական, հոգեբանական, բժշկական և իրավական օգնություն.
- օթևանը տրամադրվում է մինչև 60 օր տևողությամբ.

- օթևանը, անհրաժեշտության դեպքում, տրամադրվում է նաև բռնության ենթարկված անձի երեխային՝ նրա օթևանում գտնվելու ընթացքում.
- կազմակերպությունում հաճախորդին տրամադրվում է ժամանակավոր կացարան, օրական 3 անգամ սնունդ, սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հագուստ, կոշիկ.

Գլուխ V: ՀՀ Պետական քաղաքականություն:

Գենդերային բռնության դեմ ուղղված պետական քաղաքականությունը

ՀՀ Կառավարության կողմից հաստատվել են ներքոհիշյալ ռազմավարական ծրագրերը՝

1. <<Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման ծրագրի հիմնադրույթների մասին>> N 242 (15.04.1998թ.) և <<Հայաստանի Հանրապետությունում 1998-2000թթ. կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը հաստատելու մասին>> N 406 (26.06. 1998թ.) ՀՀ կառավարության որոշումները:

2. <<Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագիրը և Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին>> N 645-Ն որոշումը (ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 2004թ. ապրիլի 8-ին):

Համաձայն այս փաստաթղթերի պետությունը պարտավորվել է իրականացնել մի շարք միջոցառումներ ուղղված կանանց նկատմամբ բռնության երևույթի վերացմանը:

Պետական քաղաքականությունը՝

- Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թ. մարտի 30 -ի N 213-Ա որոշմամբ ստեղծվել է գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողով, որի նպատակն է հանրապետությունում գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացումը, տեղեկատվության հավաքագրման և փոխանակման մեխանիզմների մշակումը, ինչպես նաև «Ընդդեմ գենդերային բռնության» ազգային ծրագրի մշակումը:
- 2011 թվականի հունիսի 17-ին ՀՀ Կառավարության N23 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Ընդդեմ գենդերային բռնության» ազգային ծրագիրը, 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը և 2011թ. միջոցառումների ծրագիրը:

«Ընդդեմ գենդերային բռնության» ազգային ծրագիր: Ծրագրի նպատակն է նպաստել գենդերային բռնության կրճատմանը Հայաստանի Հանրապետությունում:

Գենդերային բռնության կրճատմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

1) գենդերային բռնության կանխարգելումը,

2) գենդերային բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը,

3) գենդերային բռնություն կիրառողների հետապնդումը:

Գենդերային բռնության կանխարգելման խնդիրներն են՝

- միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների կատարումը,
- գենդերային բռնության վերաբերյալ տեղեկատվության կառավարման համակարգի ներդրումը,
- խնդրի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումը
- բռնության երևույթի հանդեպ անհանդուրժողականության միջավայրի ձևավորումը,
- գենդերային բռնության վերաբերյալ գիտելիքների դասավանդման համար ծրագրային և ուսումնամեթոդական հիմքի ստեղծումը:

Գենդերային բռնությանն ենթարկված անձանց պաշտպանության խնդիրներն են՝

- գենդերային բռնության ենթարկված անձանց իրավական պաշտպանության համակարգի կատարելագործումը,
- գենդերային բռնության զոհերի և խոցելի խմբերի ներկայացուցիչների իրազեկության ընդլայնումը,
- գենդերային բռնության զոհերին տրամադրվող սոցիալական, բժշկական և իրավական աջակցության և ծառայությունների շրջանակի ընդլայնումը և դրանց որակի շարունակական բարձրացում,
- գենդերային բռնության կանխարգելման համար պատասխանատու մարմինների, զոհերին աջակցություն տրամադրող և ծառայություններ մատուցող հաստատությունների մասնագիտական աշխատակազմերի շարունակական կարողությունների զարգացումը:

Գենդերային բռնություն կիրառողների հետապնդման խնդիրներն են՝

- բռնություն գործադրած անձանց հետապնդման արդյունավետության բարձրացումը,
- բռնություն գործադրած անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնումն ու վերադաստիարակումը:

Գլուխ VI: Ուղղորդում:

Համագործակցության համակարգ, որի միջոցով պետական կառավարման մարմինները իրականացնում են իրենց պարտականությունները բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության և այն զարգացնելու ուղղությամբ՝ իրենց գործունեության մեջ ռազմավարական համագործակցություն ծավալելով քաղաքացիական հասարակության հետ

ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ: Շահառուի խնդիրների արագ և արդյունավետ լուծում՝ մասնագիտացված ծառայություններ մատուցելու միջոցով, այդ թվում՝

- կացարանի ապահովում,
- մասնագիտական բժշկական և հոգեբանական օգնություն,
- իրավաբանական խորհրդատվություն,
- կրթության կամ ուսուցման մատչելիության ապահովում
- վերաինտեգրում

ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ: Գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության ռազմավարական համագործակցություն:

Կողմերի միջև սահմանվում է գործակցության կանոնակարգ, որը թույլ է տալիս օգտագործել միմյանց միջոցները դեպքերի բացահայտման, գրանցման, իրավիճակի գնահատման, աջակցության և պաշտպանության, ինչպես նաև հանցագործության բացահայտման և կանխման ուղղությամբ:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ: Պետական կառավարման մարմինների համար գործընկերներ են հանդիսանում այդ բնագավառում մասնագիտացած այն հասարակական կազմակերպությունները, որոնք սւնեն փոխըմբռնման հուշագրեր համագործակցության մասին:

ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ՝

- Տեղեկատվության փոխանակում, դեպքերի հայտնաբերում, գործի վարում և օժանդակություն, վերլուծություն:
- Յուրաքանչյուր տարրը կազմված է մի քանի բաղադրիչներից, և բոլորը փոխկապակցված են միմյանց հետ:

Բույն տեղեկատվությունը բաժանվում է երկու խմբի.

- տեղեկատվություն տեղի ունեցող բռնարարի մասին
- տեղեկատվություն զոհի մասին

Ուղղորդումն իրականացվում է բռնության ենթարկված անձի համաձայնությամբ

Տեղեկատվության փոխանակում: Պետական կառավարման մարմինները, ի դեմս համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների համակարգում են իրենց աղբյուրներից ստացված տեղեկատվության փոխանակումը և ամեն ինչ անում են բռնության դեպքերը բացահայտելու, իրավիճակը և տվյալ անձի կարիքները գնահատելու, վերականգնողական միջոցառումներ իրականացնելու, ինչպես նաև բռնությունը կանխելու համար:

Տեղեկատվական աղբյուրներ: Հարևաններ, հարազատներ, ԶԼՄ-ներ, թեժ գծեր, սոցիալական ծառայություններ, տարածքային մարմիններ և այլն: Ընդ որում տեղեկատվության փոխանակման կարևոր և բոլորի համար պարտադիր սկզբունքներից է գաղտնիության պահպանումը:

ԶՈՀԻ ՈՒՂՂՈՐԴՈՒՄԸ՝

- Գործընթացը սկսվում է միայն տվյալ անձի համաձայնությամբ՝ նրան հայտնաբերելու պահից: Բռնության ենթարկված անձի համաձայնությունը կարևոր է թե բռնությունը կանխելու, թե տուժողի սոցիալական վերականգնումը և վերաինտեգրումը ապահովելու առումով:
- Ուղղորդումը սկսվում է տվյալ վայրում արձանագրված դեպքի գրանցման/վարման գործընթացից, որի շրջանակում կատարվում է նաև շահառուի և նրա ընտանիքի կարիքների գնահատում/ անհատական պլանի մշակում և ներդրում, վերաինտեգրմանն ուղղված միջոցառումների իրականացում:
- Անձն ուղղորդվում է համապատսխան մարմին, որը ունի առաջնային օգնություն ցուցաբերոլու լիազորություններ, ճգնաժամային կենտրոն, բուժպրոֆիլակտիկ հիմնարկություն, ոստիկանություն, ՀԿ և այլն:
- Միաժամանակ ապահովվում է ընդհանուր տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն, դրա հիման վրա ռազմավարության մշակում, կանխարգելիչ ծրագրերի իրականացում: